Գեղամ Մ. Բադալյան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Մաս երկրորդ. Վանի վիլայեթի հարավային ու արևմտյան գավառները և Վան քաղաքը*

Բանալի բառեր–Վանի նահանգ, Վան քաղաք, հայկական կիսանկախ մելիքություններ, Աղթամարի կաթողիկոսություն, Ասորական մարզ, Գավաշ (Ռշտունիք), Կարճկան և Կեցան, Վերին Կարկառ, Մոկս (Մոկաց գավառ), Շատախ, Նորդուզ, Աղբակ, Սբ. Բարդուղիմեոս Առաքյալի վանք, Գյավառ և Ջուլամերիկ, Արամ Մանուկյան:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում նախաեղեռնյան շրջանի Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական նկարագրի բացահայտմանը նվիրված մեր ուսումնասիրության շարունակությունը, որում ներառված են Վանի նահանգի հարավ-արևմտյան, հարավային, մասամբ՝ հարավ-արևելյան գավառների գյուղական և քաղաքային բնակավայրերը:

Նշված շարքում պետք է հատկապես առանձնացնել 1-ին խմբի վարչամիավորները՝ **Գավաշը** (Ռշտունիք), **Կարճկանը՝ Կեցանի** հետ միասին, **Մոկսը**, **Վերին Կարկառը** և **Շատախը**: Այս գավառներում հայերը, չնայած XIX դ. կեսերից պարբերաբար տեղի ունեցած քաղաքական վայրիվերումներին և ահագնացող բռնագաղթին, ընդհուպ Մեծ եղեռնը շարունակել են կազմել բնակչության մեծամասնությունը՝ 55-62%-ը, իսկ Վերին Կարկառում՝ 70% և ավելի: Այս երևույթը պետք է բացատրել հետևյալ 3 հիմնական պատճառներով: Նախ, մինչև XIX դ. 60-ական թթ. նշված գավառները գրեթե զուտ հայաբնակ էին, իսկ մշտական քուրդ բնակչությունը գերազանցապես ներկայացնում էր տեղի իշխող տոհմերն իրենց մերձավորներով: Երկրորդ, խիստ կարևոր դեր ունեին **Շատախում** և **Մոկսում** պահպանված հայկական կիսանկախ իշխանությունները՝ մելիքությունները, որոնց իշխողներն ունեին պետահիրավական որոշակի կարգավիճակ, ինչպես նաև հայկական զինված ջոկատների հրամանատարներ էին: Եվ վերջապես, չի կարելի անտեսել այն իրողությունը, որ առանձնացված գավառները գտնվել են Աղթամարի կաթողիկոսության հոգևոր իրավասության ներքո, և այնպիսի խոշոր սրբավայր, ինչպիսին

*Ընդունվել է տպագրության 20.08.2015:

Սուրբ Խաչն էր, տեղի հայության համար համախմբող կենտրոնի դեր էր կատարում: Նշված խմբին արևելքից հարող և միջանկյալ դիրք գրավող Նորդուզը ևս ժամանակին համատարած հայաբնակ է եղել: Սակայն քրդական չընդհատվող ներհոսքի հետևանքով XIX դ. 80–90-ական թթ. այն զգալիորեն հայաթափվել էր: Մյուս 2 խմբերի գավառները՝ **Աղբակը**, **Գյավառը** և **Ջուլամերիկը**, վարչականորեն մտել են **Հաքքարի** կամ **Հեբյարի** գավառի կազմի մեջ: Եթե վերջին երկուսում XX դ. սկզբին հայ բնակչությունը պահպանվել էր միայն առանձին բնակավայրերում, ապա Աղբակում այն մեծ թիվ էր կազմում: Որոշ տվյալներով, մինչև XIX դ. 70-ական թթ. վերջը հայերը կազմել են անգամ գավառի բնակչության մեծամասնությունը: Ցավոք, հետագա տասնամյակներին թուրքական իշխանությունների կողմից մեծաթիվ քրդերի վերաբնակեցումները խիստ բացասական հետևանքներ ունեցան, և հայերի թիվն Աղբակում 1914 թ. նկատելիորեն նվազել էր, թեև գավառը Հաքքարիի առավել հայաշատ վարչամիավորն էր: Ի դեպ, հայերին Աղբակում «պահելու» գործում կրկին պետք է կարևորել հայկական հնագույն և հռչակավոր մեկ այլ սրբավայրի՝ Սուրբ Բարդուղիմեոսի վանքի առկայությունը:

Ներկա հրապարակման մեջ առանձին ներկայացված է նահանգային կենտրոնը՝ Հայոց հինավուրց ոստան **Վան** քաղաքը: Հոդվածի վերջում Վանի նահանգի վերաբերյալ տրված են նաև ընդհանուր բնույթի աշխարհագրական և ժողովրդագրական տեղեկություններ, որոնք ընթերցողին կօգնեն որոշակի պատկերացում կազմելու միչև Առաջին աշխարհամարտը նրա գրված տարածքի, ինչպես նաև բնակչության ազգային կազմի մասին:

10) Գավաշ (Ռշտունիք)

Գավաշը (նաև՝ Գյավաշ) գրավում էր Վանա լճի հարավարևելյան առափնյա տարածքը՝ ներառյալ **Աղթամար** և **Առտեր** (պատմական՝ **Արտի**) կղզիները, ինչպես նաև **Դիվաբույնի** հրվանդանը (թուրքերեն՝ Deveboyunu): Արևմուտքում գավառի սահմանները հասնում էին մինչև **Կապուտկող** (Ընձաքիսար) լեռնագանգվածը, իսկ հարավում՝ **Ռշտունյաց** կամ **Շատախի** լեռները՝ **Արտոս** գագաթով (3554մ): Գավաշն արևելքից սահմանակից էր **Հայոց ձորին**: Պաշտոնական վարչական բաժանմամբ այն համանուն գավառակի (թրք. kaza) կենտրոնական՝ վարչամիավորի կառավարչի (թրք. kaymakam) անմիջական ենթակայության ներքո գտնվող գավառամասն էր: Գավաշի կենտրոնը Ոստան գյուղաքաղաքն էր՝ կազմված **Առվամեջ**, **Միջինթաղ** և **Վերինթաղ** թաղամասերից: Մինչև XIX դ. 2-րդ կեսը հիմնականում հայաբնակ Ոստանը հետագա տասնամյակներին՝ քրդերի հետզհետե ուժգնացող ներհոսքի հետևանքով, գրեթե ամբողջությամբ զրկվեց բնիկ տարրից (**Առվամեջի** վերջին հայ ընտանիքները հեռացան 1890-ական թթ. կեսերին): Հայերը հիմնականում դուրս մղվեցին նաև գյուղաքաղաքի անմիջական մերձակայքում գտնվող մի շարք «թաղ»-արվարձան դիտարկվող գյուղերից ու գյուղակներից: Դրանք էին՝ **Գավառսիկը** (Կուարս), **Հերիշատը** կամ **Հեշատը** (այստեղ էին գտնվում միջնաբերդը և **Սբ Ստեփաննոս Նախավկա** կիսավեր եկեղեցին), **Նորշենը** (միջնադարյան հիշատակարաններում՝ Նոր քաղաք, ուր գտնվել է **Սբ Աստվածածին** եկեղեցին), **Շարիգյոլը** (**Շալիգյոլ**), **Ռազմիրանը** (Ռազմիրան, պահպանվել էր **Սբ Սարգիս** կիսավեր եկեղեցին), **Վառենշատը** (Վառնիշատ): Բուն Ոստանում պահպանվել էին «ծովահայաց» **Քարի Սբ Աստվածածին** վանքի և **Սբ Հարություն** եկեղեցու ավերակները (XIV դ. հիշվում է նաև **Սբ Գևորգ Ջորավարը**): Ըստ էության, XX դ. սկզբին Ոստանը վերածվել էր գերազանցապես քրդաբնակ գյուղաքաղաքի՝ շուրջ 500 տուն (2400 անձ) բնակչությամբ: Վերջինիս «թաղ»-արվարձաններից հայաբնակ էին մնացել միայն **Մատմանցը** (Մատմանիս) և **Բերդաձորո Սբ Աստվածածին** կամ **Սպիտակ վանք** մենաստանին կից **Թաղիկ** (Սպիտակ վանք) գյուղերը: Այնուամենայնիվ, 1914 թ. Գավաշը Վանի նահանգի առավել հայաշատ վարչամիավորներից էր, ուր հայերը կազմում էին բնակչության 60-62 %-ը:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Աթանանց	Սբ Գևորգ	1	Առանձին տեղեկագրերում՝ նաև Հայոց ձորի կազմում:
2	Աղուն (Հաղուն)	Սբ Ստեփաննոս (Ծովահայաց)	1	Գյուղն ուներ ավերակ ևս մեկ **Սբ Գևորգ** անունով եկեղեցի: Գյուղի մոտ՝ **Այգեստան** լճափնյա վայրում, կառուցված էր **Նկարեանա Սբ Ստեփաննոս** լքյալ վանքը: Վերջինիս հարևանությամբ գտնվում էր մեկ այլ կիսավեր մենաստան՝ **Շախուռա Սբ Աստվածածինը** (Սքանչելագործ):
3	Բախվանց (Պաղվանց)	Սբ Աստվածածին	1	Մոտակայքում պահպանվել էին **Սբ Հովհաննես (**Պաղվանից Սբ Հովհաննես) վանքի և **Բախվանից բերդի** ավերակները: Մոտակա երբեմնի հայաբնակ **Վարանդանց (Վարանդաս)** գյուղում գոյություն ուներ ավերակ եկեղեցի:
4	Բողոնիս (Պողոնիս)	Սբ Աստվածածին		
5	Գանձակ	Սբ Աստվածածին (Երեք Խորան)	1	Գյուղում երևում էին ավերակ ևս մեկ եկեղեցու մնացորդներ: Անհատների մոտ պահվել էր 2 գրչագիր Ավետարան: Գյուղից ավելի քան 3 կմ հս-արևմուտք գտնվում էր **Սբ Թովմա** (**Թովմաս**) **Առաքյալի** վանքը: Վերջինիս կից տեսանելի էր **Պարծիս** կամ **Մեզրե** գյուղատեղին՝ եկեղեցու մնացորդներով:
6	Ընձակ	Սբ Աստվածածին	1	Գյուղից հարավ գտնվում էր Վասպուրականի առավել նշանավոր մենաստաններից մեկը՝ **Սբ Հակոբ Մծբնացու** վանքը (**Ընձաքիվանք**): Վանքից արևմուտք՝ **Կապուտկող** կամ **Ընձաքիսար** լեռնազանգվածի ստորոտին էր կառուցված նաև հինավուրց **Կապուտկողա բերդը**: Մինչև համիդյան կոտորածներն ուներ ձեռագրերի բավական հարուստ հավաքածու: Վանքի մոտ կար թեղու սրբացված պուրակ:
7	Թաղիկ (Չարահան)			Հռչակավոր **Չարահան** (Չաղար) **Սբ Նշան վանքի** ագարակ-«մեզրեն» էր: Վանքում էր **Եղիշե** պատմիչի գերեզմանը, որը նշանավոր ուխտավայր էր:
8	Թիմար	Սբ Աստվածածին	1	Գյուղի մոտակայքում պահպանվել էին **Սբ Հակոբ** վանքի ավերակները:
9	Իլի (Հիլու)			Գյուղում պահպանվել էին 3 ավերակ եկեղեցիներ (հայտնի են 2-ի անունները՝ **Սբ Գևորգ Ջորավար** և **Սբ Ամենափրկիչ**): Հարևան Իլիվանք (պատմ. Իլոյ վանք) քրդաբնակ դարձած գյուղում գտնվում էր **Սբ Աստվածածին** (Քառասուն խորան) վանքը՝ հիմնադրված **Գագիկ Արծրունու** կողմից X դ.: Վանքը Վասպուրականի հայերի շրջանում մեծ հռչակ վայելող ուխտավայր էր:
10	Հարբերդ (Առբերդ)	Սբ Հովհաննես	1	Պահպանվել էին բերդի մնացորդներ:
11	Հիրիճ	Սբ Սարգիս		Մոտակա **Հիրիճվանք** քրդաբնակ դարձած գյուղում պահպանվել էին ավերակ վանքի մնացորդներ:
12	Մատմանց (Մատմանիս)			

13	Մոխրաբերդ	Սբ Սարգիս, Սբ Գևորգ	1	Գյուղից մի փոքր հյուսիս գտնվում էր **Կարմրակ Սբ Աստվածածին** վանքը, ուր մինչև համիդյան կոտորածները ձեռագիր մատյաններ են պահվել: Վանքի մոտ պահպանվել էին 2 բերդի ավերակներ: Միջնադարում հիշատակվում է **Սբ Հով-հաննես** եկեղեցին: Գավաշի ամենաբազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. 115 տուն հայ բնակչությամբ:
14	Նարեկ	Սբ Հարություն	1	Գյուղում էր գտնվում հռչակավոր **Նարեկավանքը՝ Սբ Սանդուխտ** և **Սբ Աստվածածին** տաճարներով: Պահվում էին ձեռագիր մատյաններ: Վանքում է թաղված **Սբ Գրիգոր Նարեկացին,** որի շիրիմը համահայկական սրբավայր-ուխտատեղի էր: Այստեղ էր նաև **Նարեկավանքի** վարդապետարանի առաջին ուսուցչապետ, **Սբ Գրիգոր Նարեկացու** ազգական **Անանիա** (Անանե) **Նարեկացու** գերեզմանը: Նարեկի հյուսիսային կողմում բարձրացող քարաժայռերից մեկում էր գտնվում **Սբ Գրիգոր Նարեկացու քարայր-ճգնարանը,** ուր ևս ուխտի էին գալիս հազարավոր մարդիկ: Նարեկը Գավաշի ամենաբազմամարդ գյուղն էր՝ 1914 թ. ավելի քան 130 տուն հայ բնակչությամբ (մինչև 1904 թ. 200 տուն էին): Ի դեպ, XV դ. գյուղում հիշվում է ևս 2 եկեղեցի՝ **Սբ Առաքյալ** և **Սբ Գրիգոր**, ինչը ցույց է տալիս դեռ միջնադարում **Նարեկի** նշանակալի բնակավայր լինելը:
15	Նորգեղ (Նորգյուղ)	Սբ Աստվածածին, Սբ Հովհաննես	1	Գյուղում գործել է «**Ռափայելյան**» գրադարանը՝ 350 տպագիր գրքերով: XIX դ. 70-80-ական թթ. Գավաշի վարչական կենտրոնն էր: **Նորգեղի** (Նորգյուղ) մոտակայքում գտնվում էր **Սբ Գևորգ** վանքը: Նորգեղից մի փոքր հվ-արևմուտք՝ **Տախմա**նից **ջուր** գետակի ափին, հարևան **Անգալուր** (**Անալ-յուր**) և **Տեխստիս** (**Դեղձիս**) գյուղերում, պահպանվել էին հայկական եկեղեցիների ավերակներ (հայտնի է 2-րդի եկեղեցու անունը՝ **Սբ Ստեփաննոս**): Եկեղեցու մնացորդներ կային նաև նույն գետակի ձորահովտում գտնվող **Որբան** գյուղակում: **Նորգեղը** Գավաշի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 110 տուն բնակչությամբ, որից 100-ը՝ հայ:
16	Շատվան	Սբ Աստվածածին	1	**Շատվանը** միջնադարում եղել է նշանակալի բնակավայր, ինչը հավաստում են XV դ. ձեռագրական հիշատակարանները, որոնք հիշատակում են **Սբ Գևորգ Ջորավար**, **Սբ Ստեփաննոս Նախավկա** և **Սբ Ոսկյանց** սրբավայրերը (XX դ. սկզբին պահպանվել էին ավերակները):
17	Պատականց (Բատականց)	Սբ Աստվածածին (Պատրկիվանք կամ Պուտլկուվանք, նախկին մենաստան)	1	Գավաշի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 100 տուն հայ բնակչությամբ:
18	Սարե (Սարիկ, Վերին)	Սբ Աստվածածին		Գյուղում և հարևան երբեմնի հայաբնակ **Ներքին Սարեում** երևում էին ավերակ **Սբ Սահակ** և **Սբ Գևորգ** վանքերը: **Ներքին Սարեում** պահպանվել էր նաև ավերակ եկեղեցին:

19	Սպիտակվանք (Վանից թաղ, Թաղիկ)			Գյուղը դիտվում էր որպես **Ոստան** գյուղաքաղաքի «թաղ»-արվարձան, ուր գտնվում էր **Բերդաձորո Սբ Աստվածածին** հայտնի վանքը (Սպիտակ կամ Սիվտկու վանք): Վանքում պահվել են գրչագիր մատյաններ:
20	Սուրբ Սահակ		1	Ռշտունիքի նշանավոր **Լուսապտուղ Սբ Սահակ** վանքի ագարակ-«մեզրեն» էր:
21	Վանք (Առբերդի Սբ Աստվածածին)			**Հարբերդ** (**Առբերդ**) գյուղի հարևանությամբ գտնվող **Սբ Աստվածածին** վանքի ագարակ-«մեզրեն» էր:
22	Վառենց	Սբ Ստեփաննոս	1	Գյուղից արևելք՝ լճափին, գտնվում էր **Արծվաբեր** (Արծրվբունա) **Սբ Աստվածածին** կիսավեր վանքը: **Վառենցի** մոտ պահպանվել էր նաև **Մանրզկերտ** գյուղատեղին՝ կիսավեր եկեղեցիով: **Վառենցից** հյուսիս՝ լճափին, գտնվում էր երբեմնի հայաբնակ **Հինգեղը**, ուր XIX դ. վերջին պահպանվել էին **Սբ Աստվածածին**, **Սբ Գևորգ** և **Սբ Սարգիս** ավերակ եկեղեցիները (ժողովրդական ավանդության համաձայն՝ գյուղն ունեցել է 9 եկեղեցի կամ վանք): **Հինգեղի** մոտակայքից սկսվում և հյուսիսային ուղղությամբ լճի մեջ է խորանում **Դիվաբույնի** հրվանդանը, որի մեկուսի բարձունքների վրա երևում էին **Անծեղնապատի** (**Անձնապատի**) **Սբ Աստվածածին** և **Դիվաբույնի Սբ Հարություն** ավերակ վանքերը:
23	Տշող (Դշող, Տայշող)	Սբ Աստվածածին	1	
24	Փայխներ (Փակրխներ)	Սբ Աստվածածին, Սբ Ստեփաննոս	1	Գավաշի առավել հայաշատ բնակա վայրերից էր՝ 1914 թ. ավելի քան 100 տուն բնակչությամբ:
25	Փշավանց	Սբ Հովհաննես	1	Գյուղի հարևանությամբ երևում էին հնագույն **Գավաշ** կամ **Կավաշուց** գյուղաքաղաքի և **Սբ Վարդան** (**Ապազվանք**) մենաստանի ավերակները: **Գավաշը**, որի անունը ժամանակի ընթացքում փոխանցվել էր գավառին, միջնադարում նշանակալի բնակավայր էր՝ համանուն բերդով և **Սբ Ամենափրկիչ** ու **Սբ Կիրակոս** եկեղեցիներով: Ավելի արևմուտք՝ **Նարեկա ջուր** (կոչվում էր նաև Ադամակն կամ Հարբերդի ջուր) գետակի աջ ափին գտնվող **Հաջիզեյվա** (Հաջիզևեն) երբեմնի հայաբնակ գյուղում պահպանվել էր **Սբ Ստեփաննոս** ավերակ եկեղեցին: Մի փոքր հյուսիս-արևմուտք՝ լճափին, գտնվում էր Աղթամարի կաթողիկոսության «դրսի տունը» (նավահանգիստը) համարվող **Ախավանց** (**Ահավանք**) ամայացած գյուղը՝ **Սբ Ստեփաննոս** եկեղեցիով: Այստեղ կառուցվել էր նաև դպրոց: Հարևան **Իշկերտ** երբեմնի հայաբնակ գյուղում պահպանվել էր **Սբ Աստվածածին** ավերակ եկեղեցին**:** Հայկական եկեղեցի կար նաև ավելի հարավ գտնվող քրդաբնակ **Վոկոնիս** գյուղում: Լճափին երևում էին **Ջորավանքի** մնացորդները**:**
26	Քարադաշտ	Սբ Աստվածածին	1	Մանակերտ հրվանդանում պահպանվել է Վանի թագավորության դարաշրջանի բերդ (հայկական միջնադարյան աղբյուրներում՝ **Քարն Մանակերտի** կամ **Մանաճիհրի բերդ**):

XIX դ. վերջին – XX դ. սկզբին հայաթափված կամ ամայացած բնակավայրեր՝ Ախավանց (Ահավանք), Գավառսիկ, Ջառըկանց, Իշկերտ, Հերիշատ կամ Հեշատ, Հինգեղ, Մեզրե կամ Պարծիս, Ռազմիրան, Վառնիշատ (Վառենշատ), Տախմանց (Դախմանիս), Տեղտիս (Դեղձիս, Դեղձենց):

Գավաշի ամենանշանավոր հուշարձանն, անշուշտ, հայ ճարտարապետության գլուխգործոց **Աղթամարի Սբ Խաչ** տաճարն է (կառուցված Մանուել ճարտարապետի կողմից 915–921 թթ.), որը կանգուն է առ այսօր: 1113–1895 թթ. այն Աղթամարի կաթողիկոսության կենտրոնն էր, որի ընդարձակ թեմն ուշ միջնադարում ընդգրկում էր 14 եպիսկոպոսություն պատմական Վասպուրականի, Մոկքի, Կորձայքի և Աղձնիքի տարածքներում: Սակայն անընդմեջ կորուստների հետևանքով Աղթամարի թեմը XIX դ. վերջին – XX դ. սկզբին սահմանափակվել էր **Վանի** և **Բիթլիսի** (**Բաղեշ**) նահանգների մի շարք գավառներով (Հայոց ձոր, Գավաշ, Կարճկան և Կեցան, Մոկս, Կարկառ, Շատախ, Խիզան, Սպարկերտ, Շենիձոր, Սամոտանք): Կղզում հնում գործել է 10 եկեղեցի, որոնք ժամանակի ընթացքում անշքացել և ավերվել են: Աղթամարի հյուսիսարևմտյան մասում բարձրացող քարաժայռի վրա գտնվում էր համանուն հնագույն բերդը: Մինչև XIX դ. 40-ական թթ. այստեղ գտնվել է նաև **Աղթամար** հայաբնակ ավանը (XIX դ. սկզբին՝ 500–600 տուն, միջնադարում հիշատակվում է որպես քաղաք): Վերջինիս՝ հիմնականում նավավարությամբ զբաղվող բնակիչները այնուհետև տեղափոխվել են **Ավանց**: **Սուրբ Խաչը** հայտնի էր ձեռագիր մատյանների հարուստ մատենադարանով: Սակայն 1915 թ. Եղեռնից փրկված և **Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին** տեղափոխված գրչագրերն ընդամենը 285-ն էին, որոնք այժմ պահվում են **Մաշտոցի** անվան **Մատենադարանում**: Գործել է նաև վանական դպրոց: **Աղթամարից** շուրջ 5 կմ հյուսիս-արևմուտք գտնվող **Առտեր** կղզում պահպանվել էր կիսավեր **Սբ Աստվածածին** վանքը:

11) Կարճկան և Կեցան

Կարճկանը (ուշմիջնադարյան սկզբնաղբյուրներում՝ «**Փայտի աշխարհ**», իմա՝ «անտառային գավառ») գրավում էր **Վանի** և **Բիթլիսի** (Բաղեշ) նահանգների սահմանակից տարածքները՝ ձգվելով Վանա լճի հարավարևմտյան առափնյակից (հյուսիսում) մինչև **Հայկական Տավրոսի** արևելյան բազուկները կազմող **Ռշտունյաց** կամ **Շատախի** լեռները (հարավում): XX դ. սկզբի սահմաններում այն ձևավորվել է 1880-ական թթ. կեսերին, երբ վարչական անընդմեջ վերափոխությունների հետևանքով մեկ գավառակի (թրք. kaza) մեջ միավորվեցին մինչ այդ առանձին վարչամիավորներ հանդիսացող **Կարճկանը** և **Կեցանը**: Առաջինը գրավում էր լճափնյա **Գավառի** (Գյավառ) շրջանը, ինչպես նաև՝ **Արևելյան Տիգրիսի** (Բոհտան) աջակողմյան **Կեցան** վտակի ակունքներում ընկած **Կարճկանի** կամ **Եղեգիսի** արգավանդ դաշտը: **Կեցանն** ընկած էր **Կարճկանից** անմիջապես հարավ՝ համանուն գետի միջին ավազանում: **Կարճկանի** գավառակի մասն էր կազմում նաև **Կեցանի** օժանդակ **Ուրանից ձոր** (պատմ. Առուենից ձոր) գետակի և **Կարեգյան** փոքր լեռնապարի շրջանն ընդգրկող **Ուրանցի** կամ **Փարթավի** գյուղախումբը: **Կարճկանն** արևելքում՝ **Կապուտկողի** կամ **Ընձաքիսարի** լեռնազանգվածով՝ սահմանակցում էր **Գավաշին** (Ռշտունիք), հարավում **Ռշտունյաց** կամ **Շատախի** լեռներով՝ **Կարկառին** և **Խիզանին** (**Բիթլիսի նահանգ**), իսկ արևմուտքից՝ **Բիթլիսի** (Բաղեշ) նահանգապետի անմիջական ենթակայության ներքո գտնվող **Կենտրոնական** վարչամիավորին: 1902 թ.**Կարճկանը** որպես գյուղախումբ (թրք. nahiye) միացվեց **Գավաշին**՝ այդ կարգավիճակում մնալով մինչև 1915 թ.: **Կարճկանի** վարչական կենտրոնը **Սորբ** գյուղն էր, որի շուրջ 100 տուն բնակչությունից 60–70-ը հայեր էին: 1910-ից, **Կարճկանի** կազմից հանվելով, հարևան **Բիթլիսի** (Բաղեշ) նահանգի **Խիզանի** գավառակին միացվեց ավերակ **Կեցան** բերդաքաղաքի շրջանը՝ հարավում:

XIX դ. 50–70-ական թթ. **Կարճկանի** և հատկապես **Կեցանի** մի շարք բնակավայրեր քրդական ցեղերի ահագնացող ներհոսքի հետևանքով հայաթափվեցին,

թեև մինչև 1914 թ. այստեղ կիսավեր կամ կանգուն վիճակում դեռ պահպանվել էին հայկական բազմաթիվ սրբավայրեր, խաչքարեր, գերեզմանոցներ: Այս ամենով հանդերձ, սակայն, **Կարճկանը՝ Կեցանի** հետ, Առաջին աշխարհամարտի նախօրյակին շարունակում էր մնալ **Վանի** նահանգի հայաշատ վարչամիավորներից մեկը, որի բնակչության շուրջ 55%-ը կազմում էին հայերը:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Առանց (Առինձ)	Սբ Աստվածածին (Սբ Խաչ)		Եկեղեցում պահվել են մեկից ավելի ձեռագրեր: Գյուղից հյուսիս՝ լճափին գտնվող Պաղ (Բաղ) գյուղում, պահպանվել էր Սբ Թովմա(ս) ամայացած վանքը, իսկ հարևան Ջևեում (նաև՝ Ջևեն կամ Ջվանց) գտնվում էր ավերակ Սբ Սարգիս եկեղեցին: Հայկական եկեղեցու մնացորդներ կային նաև մի փոքր արևմուտք՝ նույնանուն լեռան ստորոտին ընկած Ասրանց (Հաստրանց կամ Հասրաս) գյուղում:
2	Բաշվանց (Պաշվանք, Խնձորիկ)	Սբ Աստվածածին		Գյուղում գտնվում էր Սբ Քառասուն մանկունք (Գավառու վանք) կիսավեր վանքը: Գյուղից մի փոքր հարավ-արևելք գտնվող Ծուլու երբեմնի հայաբնակ գյուղում պահպանվել էր ավերակ եկեղեցի:
3	Բելու	Սբ Աստվածածին, Սբ Թորոս, Սբ Կարապետ, Սբ Շմավոն	1	Հայկական տեղեկագրերում՝ Գավաշի կազմում: Մոտակայքում պահպանվել էր պատմական Գողց կամ Խողց ավերակ բերդը, որի անունով Կարճկանը զարգացած միջնադարում կոչվել է Խողցա երկիր: Կարճկանի առավել բազմամարդ գյուղերից էր: 1870-ական թթ. վերջին ուներ ավելի քան 1000 շունչ, իսկ 1914 թ. 110-130 տուն հայ բնակիչ:
4	Գինդրանց (Կենդրանց)	Սբ Աստվածածին	1	Գյուղում կար Սբ Պողոս անունով կիսավեր վանք: Գյուղում՝ Սբ Հակոբ և Սբ Նշան ուխտավայր-մատուռներում պահվել են 2 ձեռագիր Ավետարան: 1880-1890-ական թթ. Կարճկանի վարչական կենտրոնն էր:
5	Գոմս	Սբ Թովմա(ս)		Մոտակայքում գտնվում էր «Ջոջգլուխ» Սբ Գևորգ (Գոմոց) հայտնի վանքը:
6	Եղեգիս (Գյոլլու)	Սբ Աստվածածին, Սբ Թովմա(ս)	1	Գյուղի շրջակայքում պահպանվել էին Սբ Գևորգ և Սբ Սարգիս ավերակ վանքերը: Երևում էին նաև բերդի ավերակներ: 1870-ական թթ. Կարճկանի վարչական կենտրոնն էր: Գավառի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. 90-100 տուն հայ բնակչությամբ:
7	Խարձիթ (Խարգիթ)	Սբ Ստեփաննոս		Գյուղում կար ավերակ 3 եկեղեցի՝ Սբ Գևորգ, Սբ Թեոդորոս և Սբ Սիմեոն: Մոտակայքում կար սրբավայր՝ «Նարեկացու քար» անունով:
8	Խնձորիկ (Խնձորգին)	Սբ Սարգիս (Խնձորաց վանք, երբեմնի մենաստան)		Հայկական 1880-ական թթ. տեղեկագրերում՝ Խլաթի կազմում (Բիթլիսի նահանգ):
9	Խումս	Սբ Գևորգ, Սբ Թորոս, Սբ Պետրոս		Գյուղի մոտակայքում էր գտնվում Սբ Հակոբ (Խումսավանք) ամայացած մենաստանը: Գյուղում կար Թուխ մանուկ սրբավայր-մատուռ:

10	Ծափոր (Ծապոռ)	Սբ Գևորգ, Սբ Վարդան		Գյուղում կար ևս մեկ ավերակ եկեղեցի՝ Սբ Աստվածածին անունով: Համանուն գետակի միջին հովտում գտնվում էին 2 երբեմնի հայաբնակ գյուղեր ՝ Սորախաչը (Սուրբ Խաչ ավերակ եկեղեցիով) և Կորտկանը կամ Կարձկանցը, ուր պահպանվել էին Կորձենուց Սբ Աստվածածին և Սբ Գևորգ վանքերի մնացորդները:
11	Կանդու (Կանդվու)	Սբ Գևորգ		
12	Կանչառս	Սբ Աստվածածին		Հարևան Անդևին ամայացած՝ նախկինում հայաբնակ գյուղում, պահպանվել էին վանքի ավերակներ: Հայկական ավերակ եկեղեցի էր պահպանվել Կանչառսից մի փոքր հարավ՝ Կեցան գետի աջ ափին գտնվող Ալեկան գյուղում:
13	Կարբ			
14	Կութ (Փարթավա Կութ)	Սբ Հարություն, Սբ Ստեփաննոս		Գյուղում պահպանվել էին նաև Սբ Աստ-վածածին և Սբ Վարդան եկեղեցիների ավերակները: Հարևան Բաջանց (Պանձաս) քրդաբնակ դարձած գյուղում պահպանվել էր Սբ Ստեփաննոս ավերակ եկեղեցին: 2 ավերակ եկեղեցի ուներ նաև Բաջանցի հարևան Քրդվանք գյուղը՝ Սբ Աստվածածին և Սբ Հովհաննես անուններով:
15	Հնձան	Սբ Գևորգ		
16	Մրորս			Գյուղի մոտակայքում գտնվում էր Սբ Թովմա(ս) ամայացած վանքը:
17	Նանիկանց	Սբ Աստվա-ծածին, Սբ Եղիա	1	Նանիկանցի և Բելուի միջև գտնվում էր Սբ Հայրապետ ավերակ վանքը:
18	Շիկրանց (Շիքրանիս)	Սբ Գևորգ, Սբ Լուսավո րիչ (2-ն էլ՝ ավերակ)		Գյուղի հարևան Հեզ (Եզ) գյուղում պահ-պանվել էին Սբ Աստվածածին եկեղեցու ավերակները: Եկեղեցու մնացորդներ կային նաև մոտակա Կամար երբեմնի հայաբնակ գյուղում:
19	Ուսունց (Ուսնուս)	Սբ Խաչ (կիսավեր)		Հարևան Ավագթաղ (Հավութաղ) նախկին հայկական գյուղում պահպանվել էին Սբ Կարապետ և Սբ Ստեփաննոս եկեղեցիների մնացորդները: Ավերակ եկեղեցիներ կային նաև Ավագթաղի մոտակա Աղքիս և Չորսեն (Ճոռսեն) գյուղերում:
20	Ուրանց (Հյուրանց, Առվենից)	Սբ Ստեփան-նոս	1	Միջնադարում Ուրանցում հիշատակվում է Սբ Նշան եկեղեցին: Գյուղի մոտակայքում գտնվում էին Ուրանից Սբ Աստվածածին վան-քը և պատմական Առվենից բերդի (որտեղից՝ Ուրանց տեղանունը) մնացորդները: Եկեղեցում պահվել են ձեռագիր Ավետարաններ: Հարևան Անգեսոր (Այգեձոր) երբեմնի հայաբնակ գյու-ղում պահպանվել էր Սբ Կիրակոս ավերակ եկեղեցին: Միջնադարյան որոշ հիշատակա-բաններում հիշատակված է որպես գյուղաքա-ղաք: Իր կարևորությունը պահել էր ընդհուպ XX դ.: Կարձկանի առավել բազմամարդ բնա-կավայրերից էր՝ 1914 թ. 110-120 տուն հայ բնակ-չությամբ:
21	Ուրենդուս (Հոընդուս)	Սբ Աստվա-ծածին		

22	Սորբ	Սբ Գևորգ, Սբ Սահակ	1	Մոտակա առափնյա վայրում գտնվում էր Սորբա Սբ Կարապետ վանքը: Գյուղի մոտակայքում գտնվում էին Կավախտա բերդի ավերակները:
23	Ստուս (Հստուս)	Սբ Անտոն (Սբ Նշան)		
24	Վանիկ (Գավառ-Վանիկ)	Սբ Գևորգ		Հարևան Շամանց (Շահմունիս) երբեմնի հայաբնակ գյուղում պահպանվել էր ավերակ եկեղեցի:
25	Վանիկ (Դաշ-տու-Վանիկ)	Սբ Գևորգ	1	
26	Փիկանց (Փեկանց)	Սբ Հարություն		Գյուղի մոտակայքում պահպանվել էր «Օդելի վանքեր» կոչվող ավերակը:
27	Փրխուս (Փարհուաց)	Սբ Անտոն		Մոտակայքում էին գտնվում Փարհվաց (Փար-հուաց) պատմական բերդի ավերակները: Հարևան Ալան (Հալանց) երբեմնի հայկական գյուղում պահպանվել էին միջնադարում հայտնի ուխտավայր Ալանա Սբ Նշան եկե-ղեցու (վանքի) ավերակները:
28	Քարվակ	Սբ Ստեփաննոս		
29	Օղվանց	Սբ Գևորգ (Սբ Շմավոն), Սբ Սարգիս	1	Օղվանցից մի փոքր արևմուտք ընկած Պողա գյուղում պահպանվել էին եկեղեցու ավերակները:

Ծնթ.Կարճկանի և Կեցանի դպրոցների վերաբերյալ տեղեկությունները խիստ թերի են:

XIX դ. վերջին – XX դ. սկզբին հայաթափ եղած բնակավայրեր՝ Ավագթաղ (Հա-վաթաղ), Ջեյվա (Ջևեն), Թաղաձոր, Խիարթանք, Հեզ, Շամանց (Շահմանիս), Պաղ (Բաղ), Պողա, Սարուխաչ, Սորովանք:

12) Վերին Կարկառ («Կառկըռու գյալեն»)

Վերին Կարկառը գրավում էր **Հայկական Տավրոսի** արևելյան բազուկները համարվող **Ռշտունյաց** կամ **Շատախի** լեռների հարավային ստորոտներից սկիզբ առնող **Արևելյան Տիգրիս** (Բոհտան) գետի **Կեցան** վտակի **Կարկառ** (միջին հոսանքում՝ Եղեգիս) օժանդակի ակունքների շրջանը: Հարավում այն տարածվում էր մինչև **Եղերով** լեռնազանգված (3500 մ), որով սահմանակցում էր **Մոկսին**: Արևելքում՝**Հաղթասար** (2654 մ) լեռնագագաթով, **Վերին Կարկառը** սահմանակցում էր **Գավաշին,** իսկ հյուսիսում՝ **Ռշտունյաց** լեռնապարով, որն այդ հատվածում հայտնի էր որպես **Կարկառի լեռներ՝ Կարճկանին**: Պաշտոնական վարչական բաժանմամբ **Վերին Կարկառը** Վանի նահանգի **Գավաշի** գավառակի (թրք. kaza) գյուղախմբերից մեկն էր, որը զբաղեցնում էր ընդհանուր **Կարկառ** գավառի արևելյան հատվածը: Կենտրոնը նախկինում հայաբնակ **Կարկառ** գյուղն էր, ուր XIX դ. վերջին դեռ պահպանվել էին եկեղեցու մնացորդները: Արևմտյանը, որը միջնա-դարում հայտնի էր նաև **Եղեգիս** անունով (**Աղաքիս**, բարբառային՝ «Եղեգյեց գյա-լեն»), ընդգրկված էր հարևան **Բիթլիսի** (Բաղեշ) նահանգի **Խիզանի** գավառակի կազմում: Վերին Կարկառը Վանի նահանգի առավել հայաշատ տարածքներից էր, ուր հայերը 1914 թ. կազմում էին բնակչության ավելի քան 70%-ը:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Արկենց (Հարկենց)	Սբ Սարգիս		
2	Խորոտենց (Խորոտենց)	Սբ Գևորգ, Սբ Թադևոս		
3	Ծախող (Զախող)	եկեղեցի (ավերակ)		
4	Ծոկու	Սբ Գևորգ Զորավար, Սբ Հովհաննես		Գյուղի մերձակայքում պահպան-վել էր ավերակ **Սբ Ստեփաննոս** վանքը (Ծոկավանք < Ծաւկավանք):
5	Կիճի (Գիճի)	Սբ Սարգիս		
6	Հաղթ (Աղթ)	Սբ Գևորգ, Սբ Աստվածածին		
7	Մճկանց (Մնջկանց)	Սբ Սարգիս Զորա-վար		
8	Մուլք	Սբ Խաչ		
9	Տափ	Սբ Գևորգ		

Ծնթ. Կարկառում մինչև 1910-ական թթ. սկիզբը դպրոցներ գրեթե չեն եղել: Հայտնի է, որ 1911 թ. ինչպես Վերին, այնպես էլ վարչականորեն Բիթլիսի (Բաղեշ) նահանգի մեջ գտնվող Ստորին Կարկառ գյուղախմբերում եղել է ընդամենը 5 նա-խակրթարան, որոնք, սակայն, գործել են անկանոն կերպով:

13) Մոկս (Մոկաց գավառ)

Մոկսը գրավում էր **Վանի** նահանգի հարավարևմտյան՝ **Բիթլիսին** (Բաղեշ) սահմանակից և **Արևելյան Տիգրիսի** (Բոհտան) աջակողմյան **Մոկաց ջուր** կամ պատմական **Որբ** վտակի ավազանի տարածքը: Պայմանավորված վերջինիս բազ-մաթիվ օժանդակների կողմից ձևավորված ձորահովիտների գոյությամբ՝ գավառը կազմված էր 7 գյուղախմբից (տեղական բարբառով՝ «գյալէն» կամ «գյալի»): Մոկսի սահմաններն էին.հյուսիսում՝ **Եղերով** և **Սանդուս** (Սընտրոս) լեռնազանգվածները, որոնցով այն բաժանվում էր **Կարկառից** ու **Գավաշից**, արևելքում՝ **Շատախի** սահ-մանագլուխը կազմող **Առնոս** (3550 մ) և **Կոռաշահապ** (3560 մ) լեռնագագաթները, իսկ արևմուտքում՝ **Սպարկերտ-Մամռտանքի** լեռները, որոնցով ձգվում էր **Բիթլիսի** նահանգի սահմանը: Հարավում՝ **Ոզմի շրջանով**, **Մոկսը** սահմանակից էր նույն նահանգի **Բարվարիի** գավառակին (թրք. kaza): Ընդ որում, **Ոզմի** շրջանը գավառի կազմում է եղել մինչև XIX դ. 50-60-ական թթ., որով **Մոկսի** սահմանը հարավում հասնում էր մինչև **Արևելյան Տիգրիսի** հիմնական հունը:

Մոկսն իր առանձնահատուկ տեղն ունի Արևմտյան Հայաստանի քաղաքական պատմության մեջ, քանի որ այստեղ մի քանի դար շարունակ գոյություն է ունեցել **հայկական կիսանկախ մելիքություն**: Պահպանված տվյալների համաձայն՝ այն իր հզորության գագաթնակետին է հասել XVIII դ. վերջին քառորդին՝ **մելիք Հով-հաննեսի** (Հովիկ) կառավարման տարիներին, որի կենտրոնն **Աղին** ավանն էր: Ցավոք, մելիքը հարևան քրդական ցեղապետերի միացյալ դավադրության զոհը դարձավ, իսկ հետագա տասնամյակներին հայկական մելիքությունը խիստ թուլացավ՝ XIX դ. 40-50-ական թթ.դադարեցնելով իր գոյությունը: Մինչև 1902 թ. **Մոկսը Վանի** նահանգի գավառակներից մեկն էր (թրք. kaza): Հետագայում օս-մանյան իշխանություններն այն վերածեցին գյուղախմբի (թրք. nahiye)՝ **Գավաշի** կազմում: Կենտրոնը **5** «**թաղ**» ունեցող (իրականում՝ դրանցից մի քանիսն առանձին գյուղեր էին) ինքնատիպ կառուցվածքով համանուն գյուղաքաղաքն էր՝ փռված **Մո-կաց ջրի** երկու ափերին: Մոկսի «**թաղերից**» միայն **Մանդականցն** էր (Մանդկոնց,

Վերին թաղ) քրդաբնակ, թեև նախկինում այն ևս հայաբնակ է եղել: 1914 թ. գյուղաքաղաքի բնակչության թիվը հասնում էր 260 տան, որից շուրջ 140-ը՝ հայեր: Ընդ որում, **Մոկսը** Վանի նահանգի առավել հայաշատ վարչամիավորներից էր, ուր Առաջին աշխարհամարտի նախօրյակին հայերը կազմում էին բնակչության 60-62%-ը:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Աղին (Հաղին)	Սբ Աստվածածին		Գյուղում գտնվում էին XVIII դ. մելիք **Հովհաննեսի** (Հովիկ) բերդի ավերակները:
2	Աղմղուս (Հաղմղունքս)	Սբ Աստվածածին		
3	Անապատ	Սբ Ստեփաննոս		
4	Առինջ (Հառենչ)	Սբ Ստեփաննոս		
5	Առնանց (Հարենց)	Սբ Աստվածածին		Գյուղից հարավ բարձրացող **Առնոս** լեռնագագաթի ստորոտին գտնվում էր Մոկաց նշանավոր **Սբ Վարդան** վանքը (հայտնի էր նաև Նանենից վանք անունով): Նույն լեռան կատարին գոյություն ուներ **Սբ Գևորգ անունով** սրբավայր-ճգնարան, որը միջնադարում վանք է եղել (**Առնանից Սբ Գևորգ**):
6	Ասկնջավս (Հասկնջավ)	Սբ Հովհաննես		Գյուղի մոտակայքում գտնվում էր ավերակ **Գոուզ վանքը** (Սբ Նշան):
7	Ավարիս	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ		
8	Ատիճանց (Արճիճանց)	Սբ Հովհաննես, Սբ Ստեփաննոս		Գյուղից արևելք՝ **Մոկաց ջրի** աջ ափին գտնվում էր **Մոկսի** ամենահռչավոր վանքերից մեկը՝ **Սբ Ամենափրկիչը** (Ծպատի վանք), ուր ըստ ավանդության թաղվել է մանուկ Հիսուսին երկրպագելու մեկնած 3 մոգերից **Գասպարը**:
9	Բառ (Փառ)	Սբ Գևորգ		
10	Բուլենց (Բոլենց)	Սբ Գևորգ		Գյուղի մոտ էր գտնվում **Բուլենից (Բոլենից) Սբ Գևորգ** ամայացած վանքը, որը միջնադարում կոչվել է նաև **Յոթ Սբ Նշանաց**: Գյուղից արևմուտք՝ **Մոկաց ջրի Բառաձոր** օժանդակի աջափնյակում ընկած **Առնջիկ** նախկին հայաբնակ գյուղում հիշվում է **Սբ Գևորգ Զորավար** եկեղեցին:
11	Բուրանդ	Սբ Աստվածածին		
12	Բրտնուտ	Սբ Հովհաննես		
13	Գետեզր (Գիտրիս)	Սբ Ստեփաննոս		
14	Գինեկանց (Կինեկանց)	Սբ Գևորգ, Սբ Նշան		Գյուղի անունը կապվում է **Սբ Գայանեի** (ժողովրդական՝ Գինե) կույսի հետ: Հայտնի էր մոտակա **Գինեկանից Սբ Աստվածածին** (Սերիվանք) մենաստանով:

15	Գոմանց	Սբ Գևորգ		
16	Գոմեր	Սբ Գևորգ		
17	Դեմկառ			
18	Թառամաղ	Սբ Աստվածածին		
19	Լճան	Սբ Կարապետ		Մի փոքր հյուսիս՝ Ջոջգետի ակ աղբյուրից սկզբնավորվում է **Մոկաց ջուր** գետը: Այստեղ էր գտնվում **Փասավանք** կամ **Փեսավանք** միջնադարյան մենաստանը (կոչվել է նաև **Գեղ անապատ**): Վանքին կից մինչև 1880-ական թթ. գոյություն ուներ համանուն հայաբնակ գյուղակ՝ **Սբ Գրիգոր** եկեղեցիով: Դեպի արևմուտք՝ մեկուսի լեռնային վայրում գտնվում էր Մոկաց նշանավոր **Ակնդաշտա Սբ Աստվածածին** կամ **Խռուսանդոսի** (Ռուսինոսի) վանքը: Մոկս գավառի հյուսիսային սահմանագլխին՝ **Եղերովի** լեռնազանգվածի հարավային ստորոտին էր կառուցված հռչակավոր **Փութկու Սբ Գևորգ** (ժող. Սարի Սըփ Գյորք) մենաստանն իր մեծ ժողովրդականություն վայելող իջևանատնով:
20	Լուլենց (Լոլընից)	Սբ Գևորգ		
21	Խալենց			
22	Խրեբ (Խրիպ)			
23	Ծառտանց	Սբ Հովհաննես		
24	Ծափանց	Սբ Գևորգ		Գյուղի մոտակայքում էին գտնվում **Սբ Ստեփաննոս** (Ջորավար Սբ Գևորգ) ամայացած վանքը, **Ջրիեր** սրբատեղին:
25	Կայթանց (Կագթանց)	Սբ Թովմաս		
26	Կասր	Սբ Աստվածածին		
27	Կարկճանց (Կարճկանց)	Սբ Քրիստափոր		Գյուղից մի փոքր արևմուտք՝ **Մոկաց ջրի Առնջաձոր** օժանդակի ձախափնյակում, գտնվում էր **Սբ Գևորգ** կամ **Ալիաղենց** վանքը:
28	Կճավ	Սբ Խաչ		Գյուղում գտնվում էր նշանավոր **Սբ Աստվածածին** կամ **Քավա Նարեկացու** վանքը (Տասներկու Խորան, Կճավավանք), որը կապված է **Սբ Գրիգոր Նարեկացու** գործունեության հետ: Վանքի մոտ գտնվում էր բուժիչ սուրբ աղբյուր՝ **Ջերմուկ** անունով:
29	Կճողս (Կոչողս)	Թուխ մանուկ		Գյուղի մոտակայքում էր գտնվում **Կուճղուց** (Կոճղոնց) **Սբ Աստվածածին** վանքը:
30	Հագլվան	Սբ Աստվածածին		

31	Հակուկ	Սբ Գևորգ		Գյուղից հյուսիս՝ **Մոկսի** և **Մամոտանքի** (Բիթլիսի նահանգ) սահմանագլխին բարձրացող **Վանքեր** լեռան ստորոտին գտնվում էին համանուն վանական համալիրի ավերակները: Մինչև 1910 թ. **Հակուկը**՝ շրջակայքով, եղել է հարևան Բիթլիսի նահանգի **Բարվարիի** գավառակի (թրք. kaza) կազմում:
32	Հացաբլուր (Խոցաբլուր)			
33	Հեր (Հիր)	Սբ Աստվածածին		Մոտակայքում գտնվում էր **Հիրա Սբ Աստվածածին** ավերակ վանքը, որը միջնադարում կոչվել է նաև **Տիեզերաց Սբ Աստվածածին**:
34	Մակնի	Սբ Խաչ		
35	Մարականց	Սբ Գևորգ		Մարականցի մոտ՝ **Մոկաց ջրի** վրա, գտնվում էր խոջաներ **Մուրադի** և **Հերապետի** կողմից 1593 թ. կառուցված **Կարմիր կամուրջը** (ավելի ուշ՝ վերանորոգված խոջա **Ավետիսի** կողմից)**:** Մարականցից հարավ՝ **Մոկաց ջրի** աջակողմյան **Տալանից ձոր** օժանդակի ափին, պահպանվել էին միջնադարյան գրչության հայտնի կենտրոն **Բոնաշեն** ավանի (ըստ տեղացիների՝ քաղաք) տների և եկեղեցիների (Սբ Աստվածածին, Սբ Գևորգ Ջորավար, Սբ Կարապետ) ավերակները:
36	Մոկս, գյուղաքաղաք **«Թաղերը»**.			
	ա)Աբրահամենց (Ապըրխմանց)	Սբ Աստվածածին (Սբ Հովհաննես)		
	բ) Անծղոնց (Անջողոնց)	Սբ Աստվածածին		
	գ) Դաշտի թաղ (Շատախ)	Սբ Հակոբ Հայրապետ, Սբ Հովհաննես Մկրտիչ		Սբ Հակոբը XVII դ. հիշատակարաններում կոչվել է նաև **Սբ Կեցնա Ավետարան** (ամենայն հավանականությամբ՝ այստեղ պահվող սրբացված ձեռագրի անունով): Հայտնի էր նաև **Քառասուն մանկան Սբ Նշանը:** Դաշտի ուխտատեղիներից էին **Պեսդը** (Վերին և Ներքին), **Արծվաքարը**:
	դ) Քաղաքի թաղ (Մոկաց թաղ)	Սբ Հարություն		Գյուղաքաղաքի կենտրոնական հատվածը, որը միջնադարում կոչվել է Մեծ կամ «**Մեդնի**» (իմա՝ **Մեյդանի**, այն է՝ «կենտրոնական»): Ձեռագրական հիշատակարաններում հանդիպում է **Երեքխորան Սբ Աստվածածին** եկեղեցին: Քաղաքի թաղում էր կիսավեր **Մոկաց բերդը**:
37	Նանենց	Սբ Սարգիս		Միջնադարում եղել է բազմամարդ բնակավայր (հիշատակվում է որպես գյուղաքաղաք): Մոտակայքում գտնվում էր **Սբ Մինաս** նշանավոր վանքը:

38	Նորավանց	Սբ Սարգիս		
39	Շակամեր (Շիկամեր)			
40	Շեն			
41	Սակս (Սաքրզ)			
42	Սեպ (Սիպ)	Սբ Հովհաննես		
43	Սրբկանից (Սըպկանից) Սբ Կարապետ, վանք			**Սրբկանից** (<Սուրբ Կանանց) **Սբ Կարապետ** կամ **Ծայատի Սբ Խաչ** վանքի ագարակը:
44	Սըպկանց (Սուրբկանց)	Սբ Կիրակոս (Սբ Հարություն)		XV դ. հիշվում է **Սբ Գևորգ Ջորավար** եկեղեցին:
45	Սիմ (Սիմա մեզրե)			
46	Սուրս (Սորս)	Սբ Գևորգ, Սբ Հովհաննես Մկրտիչ		
47	Վանքիկ	Սբ Հակոբ		
48	Տմիս (Տմենց, Դմիս)	Սբ Գևորգ		
49	Փետատեղ	Սբ Հակոբ		

Ծնթ. Ըստ գյուղերի Մոկսի դպրոցների վերաբերյալ տվյալները բացակայում են: Հայտնի է միայն, որ 1911 թ. գավառում գործել է 12 հայկական դպրոց:

XIX դ. վերջին–XX դ. սկզբին հայաթափված բնակավայրեր՝ Ագրակ, Առնջիկ, Առվանց (Հառվանց), Արջկանց (Արջինք, եկեղեցին՝ **Սբ Գևորգ**, կիսավեր), Ոստինք, Փեսավանք:

14) Շատախ

Շատախն ընկած էր Վանա լճից հարավ և գրավում էր **Արևելյան Տիգրիս** (**Բոհտան**, այս հատվածում նաև՝ Շատախ) գետի վերին ավազանի արևմտյան հատվածը: Հարևան Մոկսի նման լեռնային դժվարամատչելի մակերևույթ ունեցող Շատախի տարածքը ևս բաժանվում է մի շարք ձորահովիտների (բրբռ. «գյալէն» կամ «գյալի»), որոնցով հոսում են **Տիգրիսի** վտակները (**Սևտիկնաջուր**՝ Դարենից ջուր և Բարադոտիկ օժանդակներով, **Հորիս**, **Կաղպու** կամ **Վանից ջուր**, **Ջռելաջուր** կամ **Եզնաձոր**, **Առու** կամ **Զրլկանի**): Հյուսիսային՝ համեմատաբար տափարակ մասում փռված **Փեսանդաշտի** (Փեշանդաշտ) և **Խորզանքի** (Գյորանդաշտ) գոգավորությունները հոչակված են իրենց բարեբերությամբ: Գավառը՝ **Ռշտունյաց** (Շատախի) լեռների արևելյան բազուկներով և **Արտոս** լեռնագագաթով (3554մ), սահմանակցում էր **Գավաշին** և **Հայոց ձորին,** արևելքից՝ **Գլուլական** լեռնազանգվածով և **Տաքու** սարահարթով՝ **Նորդուզին**, հարավից՝ **Հաքքարիի** կամ պատմական **Այգառքի** լեռներով՝ **Ջուլամերիկին**: Գավառի՝ Մոկսի հետ ունեցած արևմտյան սահմանը կազմում էին Եղերովից հարավ ձգվող լեռնաբազուկները՝ **Կոռաշահապ** (3560մ), **Առնոս** (3550մ) և **Կոկան** (3245մ) երկնաձիգ գագաթներով: **Արևելյան Տիգրիսի** և **վերջինիս Մասեռո** կամ **Սինեբեր** վտակի ստորին հոսանքի հունով ձգվում էր **Բիթլիսի** նահանգի **Բարվարիի** գավառակի (թրք. kaza) հետ սահմանագիծը: Շատախը՝ Մոկսի նման, առանձնանում էր իր կիսանկախ հայկական մելիքություններով, որոնք գոյատևեցին մինչև XIX դ. 40-ական թթ. վերջը: Ավագագույնը համարվում էր Արևելյան Տիգրիսի ձախափնյա ոլորանի մոտ կառուցված գավառի միջ-

նադարյան կենտրոն **Շատախ** բերդաքաղաքում և հարակից գյուղերում ու «**մեզրե**»-ագարակներում բնակվող **Շատախցիների** (բրբռ.Շատըխցեր) տոհմը («տուն»), որն **Արծրունիների** շառավիղներից մեկն էր: Հայկական մելիքանիստ ավաններ էին նաև **Կաղպին** և **Ջնուկը** (**Արևելյան Տիգրիսի** աջակողմյան **Սակի ձորում**, նաև՝ **Կաղպու ձոր**), **Հալեֆը** (դարձյալ աջակողմյան **Ծիծանից ջուր** վտակի հովտում), **Տղասպարը** կամ **Դեղասպար** (Տասպար, **Արևելյան Տիգրիսի** աջ ափին): Հայ մելիքների հրամանատարության ներքո կային զինված ջոկատներ՝ ռմբաձիգների և անգամ թնդանոթաձիգների («թոփչիների») ստորաբաժանումներով (ցավոք, **Շատախի** հայկական զինուժի վերաբերյալ տվյալներ չեն պահպանվել): Հայկական մելիքությունների հզորության գագաթնակետը XVIII դ. վերջին քառորդն էր, ինչը համընկնում է ազդեցիկ **մելիք Մալխասի** (բրբռ. Մարխաս) կառավարման հետ: Վերջինս **Շատախ** բերդաքաղաքից հարավ գտնվող **Առոսկի** ավանում իր կողմից կառուցված բերդը դարձրել էր նստավայր կենտրոն՝ համարվելով մյուս մելիքների գահերեցը: Հայկական մելիքություններին ծանր հարված հասցրին XIX դ. 40-ական թթ. իրադարձությունները: **Բադրխանի** գլխավորած քրդական շարժումը, ապա՝ օսմանյան պետության կողմից քուրդ ավատատերերի կիսանկախ իշխանությունների (հուքյումեթներ) դեմ իրականացված ռազմական արշավանքները, ըստ էության, մահացու եղան Հայոց պետականության վերջին բեկորները հանդիսացող **Շատախի** և **Մոկսի մելիքությունների** համար: Դրան զուգորդեց ժամանակակից Հյուսիսային Իրաքի **Զախոյի** գավառում բնակվող վաչկատուն **արտոշցի** (հարտոշի) քրդերի ներհոսքը Շատախի տարածք: Այն աղետալի չափեր ընդունեց հատկապես XIX դ. 60-70-ական թթ., ինչի հետևանքով Հարավային Շատախի տասնյակ գյուղեր ամբողջովին հայաթափվեցին: Այդ բնակավայրերի մեծ մասը բնակեցվեց միայն XIX դ. 90-ական թթ. վերջին և XX դ. սկզբին, սակայն՝ արդեն նստակեցության անցած քրդերի կողմից: Պաշտոնական վարչական բաժանմամբ Շատախը **Վանի** նահանգի գավառակներից էր (թրք. kaza), որի կենտրոնը, XIX դ. կեսերին հետզհետե ամայացող բերդաքաղաքի փոխարեն, դարձել էր մի փոքր արևմուտք գտնվող **Թաղ** (Շատխութաղ, միջնադարյան հիշատակարաններում՝ **Մեյդան**) գյուղաքաղաքը: Այն կառուցված էր **Քյուրիկ** կամ **Մեյդանքար** (2887մ) և **Ջամլանբեկ** (2571մ) լեռնագագաթների միջև ընկած ձորահովտում, ուր **Սևտիկնաջուր** վտակը միախառնվում է **Արևելյան Տիգրիսին**: **Թաղը** զուտ հայաբնակ էր՝ 1914 թ. 250-300 տուն բնակչությամբ, և հայտնի արհեստագործական կենտրոն: Հատկապես հռչակված էին տեղի հմուտ շալագործներն ու գզրարները, որոնց արտադրանքն արտահանվում էր ինչպես հարևան նահանգներ, այնպես էլ Օսմանյան կայսրության այլ բնակավայրեր, այդ թվում՝ **Կ. Պոլիս**: Շատախն Առաջին աշխարհամարտի նախօրեին **Վանի նահանգի** առավել հայաշատ գավառակներից էր (բնակչության ավելի քան 60%-ը): **Թաղը** հայ ազատագրական շարժման հայտնի կենտրոններից էր, որի քաջասիրտ հայերը 1915 թ. մարտ-մայիս ամիսներին լավ կազմակերպված հերոսամարտի շնորհիվ ջախջախեցին թուրքական ոստիկանության և քրդական «համիդիե» ավազակախմբերի թվաքանակով մի քանի անգամ գերազանցող ջարդարար ուժերը՝ պաշտպանելով իրենց ազգային արժանապատվությունը և բնօրրանը:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Այգի (Հիգի)	Սբ Ամենափրկիչ		Գյուղի մոտակայքում գտնվում էր **Սբ Ստեփաննոս** մենաստանը՝ **Ծաղկավանքը** (Ծաղկեվանք, նաև՝ Ծղա վանք):
2	Առեղ (Առեղան)	Սբ Վարդան	1	
3	Առիգում (Հառիգում)			

4	Առոսկի (Հառոս-կի, Առոսիկ)			Գյուղում պահպանվել էին XVIII դ. վերջին քառորդին կառավարած նշանավոր **մելիք Մալխասի** (Մարխաս) բերդի ավերակները:
5	Արմշատ (Հարմըշատ)	Սբ Վարդան		Հյուսիսարևելյան կողմում բարձրացող **Կոկան** լեռան վրա գտնվում էր **Արմշատի բերդը՝ Սբ Սարգիս** ուխտավայր-մատուռով (բերդը կոչվել է նաև այդ անունով): Արմշատի շրջակայքում գտնվում էին **Սբ Աստվածածին**, **Սբ Գևորգ** և **Սբ Հելեն** սրբավայրերը: Գյուղից հարավ՝ **Արլ Տիգրիսի** և վերջինիս ձախակողմյան **Շաբոռ** կամ **Մասեռռ** վտակի միախառնման վայրի մոտ, կառուցված էր **Ռաշանա** (Շաբոռա) կամուրջը: Գյուղը Շատախի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 140 տուն հայ բնակչությամբ: Հայկական հիմնական կենտրոններից մեկուսացած, հիմնականում քուրդ վայրագ ցեղերով շրջապատված **Արմշատի** հայերը, որոնք օժտված էին զգալի ինքնուրույնությամբ, 1915 թ. մարտ-մայիս ամիսներին հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ ոչ միայն զերծ մնացին կոտորածից, այլև փրկեցին հարևան մի շարք գյուղերի բնակիչներին՝ նրանց տեղափոխելով անվտանգ վայրեր:
6	Արջկանց	Եկեղեցի		**Արջկանց** և **Կոռիչ** գյուղերը, որպես կանոն, նշվում են հարևան Բիթլիսի նահանգի **Բարվարիի** գավառակի կազմում:
7	Աքրուս	Սբ Ստեփաննոս		
8	Բախչկանց-մեզրե			
9	Բլիսավա			
10	Բոլս (Պոլս)	Սբ Աստվածածին		
11	Գյորանդաշտ (Կորանդաշտ)			
12	Գոմեր (Ծղա գոմեր)			**Սևտիկնաջուր** վտակի վրա՝ **Գոմերից** մի փոքր հյուսիս, կառուցված էր **ձվկատան կամուրջը** (մոտակա ձվկատուն գյուղակի անունից):
13	Դարենց, Ներքին	Սբ Շմավոն		
14	Դարենց, Վերին			
15	Երիցու-մեզրե			

16	Թաղ (Շատխու-թաղ, Մեյդան), գյուղաքաղաք	Սբ Աստվա-ծածին, Սբ Ստեփաննոս, Սբ Կարապետ	2	Դպրոցներից մեկը՝ տղաների (200 աշակեր-տով), մյուսը՝ աղջիկների: 1907-ից **Թաղում** հրատարակվել են «Տիգրիս», «Անկախ Տիգ-րիս» և «Ժայռ» խմորատիպ թերթերը: Թա-ղը կազմված էր **Վերին**, **Ստորին** (Վարի) և **Ջրաղացի** թաղերից, որոնցից առաջին եր-կուսը գտնվում էին **Արլ Տիգրիսի** և **Սևտիկ-նաջրի** միախառնման աջ, իսկ 3-րդը՝ ձախ ափերին: Թաղերն իրար էին միանում մի քանի կամուրջներով, որոնցից աչքի էր ընկ-նում «**Քարե կամուրջը**»: Քարաշեն մեկ այլ կամուրջ էր կառուցված **Թաղից** արևելք՝ **Արլ Տիգրիսի** վրա, **Խալիֆկանց** գյուղակի մոտ: Այստեղ էր գտնվում նաև միջնադար-յան **Կերդեու Սբ Ստեփաննոս** վանքը (Գո-դովանք, Քըթվանք): **Խալիֆկանցի** կա-մուրջից մի փոքր արևելք՝ **Արլ Տիգրիսի** ձախ ափին գտնվող գավառի հին կենտրոն **Շատախ** կամ **Հեշատ** բերդաքաղաքում պահպանվել էին **Սբ Ստեփաննոս** և **Սբ Ամենափրկիչ** եկեղեցիները, որոնք հավա-սարապես պաշտելի էին հայերի և քրդերի կողմից: Պահպանվել էր նաև միջնադարյան **Շատախ** բերդը: **Շատախից** հարավ տա-րածվող **Ծիծղկտուն** հովտում (իմա՛ «զվար-ճալի»), ինչպես նաև **Արլ Տիգրիսի** ձախ ափի երկայնքով ցրված էին գերազանցա-պես հայաբնակ «**մեզրեները**»՝ մելիքների նախկին կալվածքները (բրբռ. «մըզրէն», տես ցուցակում:
17	Լշանց			
18	Խաչանց (Խաչանիս)	եկեղեցի (ավերակ)		
19	Խումար	Սբ Թադևոս Առաքյալ		Գյուղից արևելք՝ **Արլ Տիգրիսի** և վերջինիս ձախակողմյան **Զոելաջուր** կամ **Եզնաձոր** վտակի միախառնման վայրի մոտ բարձ-րացող քարաժայռի գագաթին կառուցված էր պատմական **Զոայլ** կամ **Զոել** ամրոցը: Այստեղ էր գտնվում նաև **Սարի Սբ Գևորգ** (բրբռ. Սըփ Գյորք) ավերակ վանքը, որը հայտնի էր նաև **Զոելավանք** անունով: **Զոելի** քարաժայռի հարավային ստորոտին գտնվում էր սրբացված **Բակշանց աղբ-յուրը**՝ ուխտավայր-մատուռով: **Զոելաջրի** վրա գտնվում էր **Թաղի Խլո Խոջկե** մեծա-հարուստ տոհմի ներկայացուցիչների կող-մից սրբատաշ քարերով կառուցված **Զոելի** նշանավոր կամուրջը: Բերդասարից մի փոքր հարավ ընկած **Գիրեսոր** (Գլեսոր) գյուղում պահպանվել էր ավերակ եկեղեցի: **Արլ Տիգրիսի** աջ ափին՝ **Խումարից** հյու-սիս, գտնվում էին **Շկեվանքի** (**Շկեվանց**, քրդ.՝ Eşkemanis) ավերակները: Վերջինից արևմուտք՝ մի քարաժայռի վրա, տեսանելի էին **Մանկաբերդի** և **Սբ Մանուկ** վանքի ավերակները:

20	Ծիծանց	Սբ Գևորգ		Գյուղի մոտակայքում էր գտնվում **Ծիծանից Սբ Խաչ** վանքը, որի խաչը, ըստ ավանդության, ծիծեռնակներն էին բերել: Այստեղից էլ ժողովրդի շրջանում վանքը կոչվում էր նաև «**Ծիծեռնաբեր Սբ Խաչ**»: **Ծիծանցից** հվ-արևելք գտնվում էր **Հալեֆ,** երբեմնի մելիքանիստ ամայացած գյուղը, ուր դեռ տեսանելի էր եկեղեցու ավերակը: Ավերակ եկեղեցի էր պահպանվել նաև **Արլ Տիգրիսի** աջակողմյան **Ծիծանից ջուր** վտակի ափին գտնվող երբեմնի հայաբնակ **Գիտ** (Կիտ, Գետ) գյուղում: Վերջինից մի փոքր հարավ ընկած **Բիֆերանգ** (Պիֆարան) գյուղում ևս կար ավերակ եկեղեցի:
21	Ծուղ	Սբ Հովհաննես		Գյուղը հայտնի էր իր սրբացված ձեռագիր Ավետարանով («Ծղա Ավետարան»), որին ուխտի էին գալիս:
22	Կաղազիս	Սբ Գևորգ	1	
23	Կաղպի (Կաղբի)	Սբ Գևորգ, Սբ Խաչ	1	Գյուղի մոտ էր գտնվում **Ջորավոր Սբ Գևորգ** վանքը, որը հայտնի էր նաև որպես **Փոքր Ակոռովանք**: **Կաղպու** ձորի ամենահեռավոր՝ **Առնոս** լեռան արևելյան ստորոտին գտնվող քրդական **Սոքանց** գյուղը միջնադարում հայաբնակ էր և կոչվել է **Ծղկունք**, ուր գործել է **Սբ Աստվածածին** եկեղեցին: **Կաղպին** Շատախի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. ավելի քան 90 տուն հայ բնակչությամբ:
24	Կաճետ (Կաճեթ)	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ, Սբ Շմավոն Առաքյալ	1	Շատախի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 110 տուն հայ բնակչությամբ: Հայաբնակ էին նաև **Կաճետի Լշանց** և **Թզիզ «**մեզրե»-ագարակները: Կաճետի զավակներ էին նշանավոր հայդուկներ Չաթոն ու Շերոն:
25	Կայնամերան	Սբ Սարգիս	1	
26	Կասր (Գազր)			Գյուղից հս-արևելք՝ **Արլ Տիգրիսի** աջ ափին գտնվող **Գագան** (**Կական**, բրբռ.՝ Գյագյան) գյուղում, որի բնակիչները բռնի դավանափոխ եղած հայեր էին, պահպանվել էր մզկիթի վերածված **Սբ Սարգիս** եկեղեցին: Դավանափոխների համար որպես սրբավայր էր շարունակում ծառայել նաև **Գագանի** մոտակա լեռնագագաթի վրա կառուցված հայկական վանքը, որը տեղացիները կոչում էին **Նապաթ** (Անապատ):
27	Կոռիչ	եկեղեցի		
28	Կոռովանք (Ակոռովանք), վանք			**Շատախի Ակոռովանք** (Սբ Ստեփաննոս) նշանավոր վանքին կից «մեզրեն»: Միջնադարում վանքը գրչության հայտնի կենտրոն էր:
29	Կվերս	Սբ Աստվածածին		
30	Հաշկանց	Սբ Սարգիս	1	
31	Հարո-մեզրե			

32	Հինենց	Սբ Աստվա-ծածին, Սբ Գևորգ (Գետարգել), Սբ Կիրակոս		
33	Ղարադեր (Կարադեր, Խոսրովվանք), վանք			Հռչակավոր **Սբ Աստվածածին** կամ **Խոս-րովային Սբ Նշան** (Խոսրովվանք) վան-քին կից ագարակը: Հիմնադրել է **Սբ Գրիգոր Նարեկացու** հայրը՝ Xդ. նշանա-վոր եկեղեցական գործիչ **Խոսրով Ան-ձևացին**, որը թաղված էր իր իսկ կառուցած մենաստանում, իսկ շիրիմը հայտնի ուխ-տատեղի էր:
34	Մարդակերոց			
35	Մարդանց (Մարթանիս)	եկեղեցի (ավերակ)		**Մարդանցը** Շատախի ծայր հվ-արևելյան գավառակի՝ **Զոելի** կամ **Եզդինանի** (Եզ-նան, համանուն քրդական ցեղի անունից) կենտրոնն էր: Շրջակա հայաթափված գյուղերից մի քանիսում ևս պահպանվել էին հայկական եկեղեցիների մնացորդներ (**Բարագունդ**, **Գորանց** կամ **Կորան**, **Ճի-ճանց** կամ **Ներքին Ծիծանց**):
36	Մարծեղ (Մարցեղ)	Սբ Շմավոն		Գյուղից արևելք՝ **Արլ Տիգրիսի** հանդիպա-կաց աջ ափին գտնվող **Վրիշեն** (Վերիշեն) գյուղում պահպանվել էր **Սբ Սարգիս** (բրբռ. **Վրիշնա Սբփ Սարգիս***)* ամայացած վանքը, որը նույնանում է **Շատախի** հո-գևոր նշանավոր կենտրոններից մեկի՝ **Ակեռվանքի** հետ:
37	Մաքոշկ (Քյոշք)	Սբ Սարգիս		
38	Մուսկավա (Մուսկավեն)			
39	Նառ (Նար),Ներքին			Ժողովրդական ավանդության համաձայն՝ այստեղից էր **Խոսրով Անձևացին**, որն այնուհետև իր ընտանիքով տեղափոխվե-լով **Փեսանդաշտ՝** հիմնել էր նույնանուն մեկ այլ գյուղ (Վերին Նառ), իսկ վերջինիս մոտակայքում՝ **Սբ Աստվածածին** վանքը, որն ավելի ուշ կոչվեց **Խոսրովվանք**, իսկ քրդերի կողմից՝ **Ղարադեր** (տե՛ս թիվ 33): Գյուղի մոտ բարձրացող **Սբ Գրիգոր** քարաժայռի վրա գտնվում էր համանուն մատուռը, որն ուխտատեղի էր: Հարևան **Բիզանիս** (Վժանք) երբեմնի հայաբնակ գյուղում գոյություն ուներ գիհու (կենու) սրբազան պուրակ, որը պաշտելի էր թե՛ հայերի, թե՛ քրդերի կողմից:
40	Նառ,Վերին			
41	Նավհանդ (Վերին Շիվռաշ)	եկեղեցի (կիսավեր)		
42	Նկունիս			
43	Շամո-մեզրե			
44	Շեղջանց (Շեղցանք)	Սբ Քրիստափոր		

45	Շիդան	Սբ Ամենափրկիչ	1	Մոտակայքում պահպանվել էին բերդի ավերակներ:
46	Շինո-մեզրե			
47	Շիվռաշ, Ներքին	Սբ Գևորգ		Հարևան **Սպինդար** գյուղում պահպանվել էր ավերակ եկեղեցի:
48	Շոռե-մեզրե			
49	Պաղկ	Սբ Քրիստափոր		Գյուղից հյուսիս՝ հարևան **Թլորանց** (Թլոլանց) և **Սիմգորգիկ** (Սբ Գևորգ) գյուղակներում, պահպանվել էին հայկական վանքերի ավերակներ:
50	Պապոնց-մեզրե (Պապոյենց-մեզրե)			
51	Ջնուկ (Ճնուկ)	Սբ Ստեփաննոս	1	
52	Սակ	Սբ Գևորգ		Գյուղի մոտ՝ **Արլ Տիգրիսի** վրա, կառուցված էր **Խոլքտան** հայտնի քարե կամուրջը: Ավանդության համաձայն՝ կամրջի շինարարության պատվիրատուներն էին **Հալեֆի** և **Տղասպարի** (կամ՝ **Ջնուկի**) հայ մելիքները:
53	Սարգետ (Սըրկեթ)	Սբ Աստվածածին		Գյուղի մոտակայքում էր գտնվում համանուն կիսավեր բերդը: **Սարգետի** մոտակա՝ **Արլ Տիգրիսի** աջ և ձախ ափերին ընկած երբեմնի հայկական գյուղերում պահպանվել էին եկեղեցիների ավերակներ: Դրանք էին՝ **Արբի** (Հարե), **Դինզ** (Տընկե), **Շամենց** (Շահմունիս, մոտակայքում՝ **Հեշատ** կիսավեր բերդ), **Ֆարխենց** (Ֆարխընիս, **Ֆարխենից** կիսավեր բերդով): Իսկ **Սարգետից** արևելք՝ **Արլ Տիգրիսի** աջ ափին գտնվող **Հալան** կամ **Խրոան** գյուղում պահպանվել էր **Սբ Խաչ** վանքի ավերակը (բրբռ. Քոշախան Սբ Խաչ): Գյուղի մոտ՝ **Արլ Տիգրիսի** վրա, կառուցված էր **Ջալկանից** կամ **Ճալկանից** կամուրջը (համանուն գյուղի անունից):
54	Սևտիկին (Սիվտկի, Սուրբ Տիկին)	Սբ Հարություն (Սուրբ Տիկին, նախկին վանք)		Մի փոքր հվ-արևմուտք գտնվում էր **Պիպը** գյուղատեղին, որտեղից էլ տեղափոխվել էին **Սևտիկինի** բնակիչները: Շատախի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 100 տուն հայ բնակչությամբ:
55	Սևվտիկնա գոմեր (Սիվտըկնա գոմեր)			Գյուղից մի փոքր հվ-արևելք՝ **Սևտիկնաջրի** և վերջինիս **Դարենից ջուր** օժանդակի միախառնման վայրի մոտ գտնվում էր **Շահրուր** լքված գյուղը՝ իր նշանավոր բերդով: Գյուղի մոտակայքում գտնվում էր **Սբ Նշան** սրբավայրը:
56	Սոզվանց	Սբ Շմավոն (Շիմոն)		Նշանավոր էր գյուղի **Սբ Ամենափրկիչ** վանքը (Սերիվանք):
57	Սվարու-մեզրե			

58	Վախրով	Սբ Շմավոն		**Վախրովից** արևմուտք՝ **Արևելյան Տիգրիսի** աջափնյա **Նորովանց** գյուղում պահպանվել էր **Սբ Սարգիս** վանքը (Նորովանք), որը հավասարապես պաշտելի էր ինչպես հայերի, այնպես էլ գյուղին տիրացած քրդերի կողմից: Նույն հատվածում՝ գյուղի անմիջական հարևանությամբ գտնվող **Արկանիս**, **Հացիս** և **Ոգիս** (Որկիս) գյուղերում, պահպանվել էին եկեղեցիների ավերակներ: **Վախրովից** հյուսիս՝ դարձյալ **Արլ Տիգրիսի** աջ ափին գտնվող **Ճամիկ** գյուղում, պահպանվել էր ավերակ եկեղեցի:
59	Տղասպար (Դեղասպար, Տասպար)	Սբ Գևորգ, Սբ Հովհաննես		XIX դ. կեսերին Շատախի առավել բազմամարդ բնակավայրերից էր (մինչև 100 տուն): Սակայն տեղի մելիքության անկումից հետո **Տղասպարը** զգալի կերպով անշքացել և դարձել էր սակավամարդ: Գյուղում կար գիհու (կենի) սրբացված պուրակ:
60	Քոսենց-մեզրե			Գյուղում գտնվում էին **Սբ Աստվածածին** և **Սբ Սարգիս** անուններով 2 մատուռ, որոնք ճանաչված ուխտատեղիներ էին:
61	Քրմենց			Գյուղին կից գտնվում էր **Քրմենից Սբ Խաչ** ամայի վանքը:

Ծնթ. Շատախի դպրոցների վերաբերյալ տվյալները նույնպես խիստ թերի են: Հայտնի է, որ 1911 թ. գավառում դրանք 6-ն էին:

XIX դ. վերջին – XX դ.սկզբին հայաթափ եղած բնակավայրեր՝ Ավզնի, Բավեզ (Փաղենց), Բարագունդ, Գլեսոր (Գիրեսոր), Գոտիս, Գորանց (Կորան), Թլորանց (Թլոլան), Խալիֆկանց, Խըռան (Հալան), Խոլքտուն (Խուլքտուն), Ճամիկ, Ճիճանց (Ծիծանց), Մելիքի-մեզրե, Շահրուր, Շամենց (Հեշատ), Շատախ (Հեշատ), Ոգիս (Որկիս), Փական, Ֆարխենց:

15) Նորդուզ

Նորդուզը (պատմական **Անձևացիքի Նորբերդ** հնագույն կենտրոնի Noodiz օտար անվանումից) գտնվում էր **Շատախից** արևելք՝ գրավելով **Արևելյան Տիգրիսի** (Բոհտան, այս հատվածում՝ նաև Նորդուզ) ակունքների շրջանը: Գավառն արևելքում հասնում էր մինչև **Աղբակի** լեռներ՝ սահմանակցելով Հաքքարիի կենտրոնական **Աղբակ** գավառին (քրդ. Seralbak, հայկական **Մեծ Աղբակ** տեղանվան պարզ թարգմանությունը): Հյուսիսում Նորդուզը սահմանակցում էր **Խոշաբին**, իսկ հարավում՝ **Ջուլամերիկին**:

Նշված սահմաններում Վանի նահանգի **Նորդուզի** գավառակը (թրք.kaza) ձևավորվել է XIX դ. 80-ական թթ. կեսերին՝ մինչ այդ գոյություն ունեցող **Բուն Նորդուզ** կամ **Քարբահ** (Քարպահ) և **Գավռկանք** (Կավռկանք) վարչամիավորների միաձուլումով: Կենտրոնն Արևելյան Տիգրիսի ձախակողմյան օժանդակներից մեկի ափին գտնվող **Մարվանա** (Մարվանեն) գյուղն էր, որը գերազանցապես ասորաբնակ էր (1914 թ. շուրջ 70 տուն, որից 5-ը՝ հայեր):

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Աղսին (Աղզի)			
2	Բեշան			

3	Դիմ	Սբ Աստվածածին		
4	Կողան	Սբ Խաչ		
5	Հեքյան (Հեգեվան, Այգեվան)	եկեղեցի		
6	Հոսթայան (Հոստիան)	Սբ Ստեփաննոս		
7	Մարվանա (Մարվանեն)			Գյուղում գոյություն ուներ ասորական եկեղեցի՝ **Սբ Շմավոն** (ասորերեն՝ Mar-Shmooni) անունով: Ասորական եկեղեցիներ են եղել նաև մոտակա **Չըլգրին** (Չըլկրի՝ **Սբ Հակոբ**, ասոր. Mar-Yaqub) և **Օլաման** կամ **Ալաման** (**Սբ Աստվածածին,** ասոր. Mart-Miriam) գյուղերում:
8	Նորաբին (Նորաբեր, Ներքին)			
9	Շամանց (Շամանիս)	Սբ Ստեփանոս		
10	Սքունիս, Ներքին	Սբ Աստվածածին		
11	Սքունիս, Վերին			
12	Փիրբադալան	Սբ Սարգիս		Գյուղում պահվել է ձեռագիր 3 Ավետարան: **Փիրբադալանի** արոտավայրում (քրդ. zoma) պահպանվել էին բնակավայրի և բերդի ընդարձակ ավերակներ՝ խաչքարերի և գերեզմանների մնացորդներով: Չի բացառվում, որ այստեղ է գտնվել պատմական **Նորբերդ** ամրոցը**:** 1890-ական թթ. սկզբին սա գավառի առավել բազմամարդ բնակավայրն էր՝ 120 տուն հայ բնակչությամբ:
13	Օլաման (Ալաման)			

Ծնթ. Նորդուզում հայկական դպրոցներ գրեթե գոյություն չունեին, ինչը տեղի քուրդ ցեղապետերի հարստահարությունների արդյունքն էր:

XIX դ. վերջին-XX դ. սկզբին հայաթափ եղած բնակավայրեր՝ Աշկան (եկեղեցին՝ **Սբ Հովհաննես**, ավերակ), Առազ (եկեղեցին՝ **Սբ Սարգիս**, ավերակ, մոտակայքում՝ **Սբ Հովհաննես** լքյալ վանք), Արջ (պատմական **Արճուճք** բերդը), Էրանի, Խորխոռա, Հեշատ (Հերիշատ):

Նորդուզը Վանի նահանգի առավել հայաթափ եղած գավառներից էր, որի գլխավոր պատճառը XIX դ. 40-50-ական թվականներից սկիզբ առած **արտոշցի** (հարտոշի) մի շարք քրդական ցեղերի (աշիրեթներ) անկասելի ներհոսքն էր: Աստիճանաբար անցնելով նստակեցության՝ եկվորները հաջորդ տասնամյակներին հետևողական կերպով «յուրացրին» նոր տարածքը՝ դուրս մղելով հայերին, որոնք հարկադրված էին զանգվածաբար տեղափոխվել ավելի ապահով վայրեր: Հայերի արտագաղթն աղետալի չափերի հասավ հատկապես 1890-ական թթ. համիդյան հալածանքների սաստկացման և կոտորածների ընթացքում: Նորդուզից հարյուրավոր հայ ընտանիքներ հաստատվեցին հիմնականում **Աբաղայի** գյուղերում: Այս

ամենի ծանր հետևանքը եղավ հայ բնակչության տեսակարար կշռի կտրուկ նվազումը: XX դ. սկզբին գավառի քրդաբնակ դարձած բազմաթիվ գյուղերում, հակառակ եկվորների կողմից հայկական հուշարձանների հետևողական ոչնչացմանը, դեռ պահպանվել էին վանքերի, եկեղեցիների, գերեզմանների և խաչքարերի մնացորդներ: Ոչ լրիվ տվյալներով, հայկական հուշարձաններ էին պահպանվել (կիսավեր կամ հիմնովին ավերված) Նորդուզի **Ալեկան** (վանք), **Աղջրի** կամ **Աղջուր**, **Բլիսավա**, **Դերիկ** (քրդ. «վանքի գյուղ»), **Դմբրկոս**, **Խազեր** կամ **Խազրի**, **Սորավիան** (<Զորավանք) բնակավայրերում: Բացի այդ, հայ կյանքի հետքերի կարելի էր հանդիպել ակնհայտ հայեցի անվանումներով (մասամբ՝ աղճատված) գյուղերում, ինչպես օրինակ՝ **Ագրակ** (1661 թ. այստեղ Ավետարան է ընդօրինակվել), **Ավան**, **Բաբանիս** կամ **Բըպանըս**<Բաբանց, **Բադրանիս**<Պատրանց, **Գովան**<Գոմեր, **Լիս** (պատմական՝ Լեկ), **Կիյրիկ** (պատմական՝ Կրերիք), **Հերեսան**<Երիցանք, **Մոխիկ**, **Ուռիկ**, **Սել** (պատմական՝ Ձեղ), **Տախմանիս**<Տախմանց-Տախվանց, **Վարջունի** ևլն: Նորդուզի բնակչության մի զգալի մասը կազմում էին ասորիները, որոնք տեղաբաշխված էին գերազանցապես գավառի հարավային՝ շուրջ մեկ տասնյակ գյուղերում: Ընդ որում, որոշ բնակավայրերում հայերն ու ասորիներն ապրում էին կողք կողքի:

16) Աղբակ

Աղբակը գրավում էր **Վանի նահանգի** թուրք-պարսկական սահմանագլխի երկայնքով ձգվող հարավարևելյան ընդարձակ հատվածը՝ **Տիգրիսի Մեծ Զաբ** (Զավ) խոշոր վտակի (ըստ որոշ ուսումնասիրողների՝ գետի 3-րդ բազուկը) վերին ավազանում: Հյուսիսից՝ **Ղոթուրի** (Կոտորոց) լեռների արևմտյան ճյուղավորումներով, Աղբակը սահմանակցում էր **Մահմուդիին**: Գավառի արևմտյան ողջ սահմանի երկարությամբ ձգվող **Աղբակի լեռները** այն բաժանում էին **Խոշաբից** և **Նորդուզից**: Արևելքում՝ **Զագրոսի** (Զագրոշ) լեռնաշղթայով, Աղբակը սահմանակից էր **Սալմաստի** գավառին **(Պարսկաստան)**, իսկ հարավում՝ **Մեծ Զաբի ճամբկան** և **Աղբակ** (Մասեռո) վտակների ձորահովիտներով, **Ջուլամերիկին** և **Գյավառին**: Պաշտոնական վարչական բաժանմամբ Աղբակը **Վանի** նահանգի **Հաքքարիի (**Հեքյարի**)** գավառի (թրք. sancak) կենտրոնական վարչամիավորն էր՝ գավառապետի (թրք. mutasarrıf) անմիջական կառավարման ներքո: Կենտրոնը (միաժամանակ՝ և Հաքքարիի գավառի) **Բաշկալե** կամ պատմական **Հադամակերտ** քաղաքն էր, որի շուրջ 1500 տուն բնակիչներից 200-ը հայեր էին:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ալալան (Սբ Հակոբ, Ելենի)	Սբ Հակոբ		Նշանավոր ուխտատեղի էր: Գյուղի մոտ կար ծառերի սրբացված պուրակ՝ **Սբ Հակոբի** անունով:
2	Ալաս (Ալազ)	Թուխ մանուկ		
3	Աշկերտ (Աշքիթան, Ներքին)	եկեղեցի (ավերակ)		Ավերակ եկեղեցի էր պահպանվել նաև հարևան **Վերին Աշկերտում**: **Աշկերտ** զույգ գյուղերից արևելք գտնվող **Քյոբախբուլան** գյուղում պահպանվել է Վանի թագավորության դարաշրջանի ամրոց:
4	Առակ	Սբ Ստեփաննոս (Սբ Հովհաննես)		Մոտակայքում գտնվում էր **Աշտարակա Սբ Աստվածածին** հինավուրց վանքը: Մինչև համիդյան կոտորածները **Առակը** գավառի առավել բազմամարդ գյուղերից էր՝ ավելի քան 80 տուն հայ բնակչությամբ (1914 թ.՝ ընդամենը 24 տուն):

5	Ասպստան (Հասփսթան)	Սբ Հարություն	1	Ձեռագիր հիշատակարաններում հիշ-վում է նաև **Սբ Սարգիս Զորավար** եկեղեցին: **Ասպստանից** արևելք՝ **Մեծ Զաբի** ձախափնյակում՝ իրարից ոչ շատ հեռու, գտնվում էին 2 նախկինում հա-յաբնակ գյուղեր. **Խաշնոցը** (Խաշանիս՝ **Սբ Մարիան** ավերակ եկեղեցիով) և **Ամպիկը** (Ամբի, ավերակ եկեղեցիով): Վերջինից հարավ գտնվող **Ջրուբ** (Ճրուպ) գյուղում X դ. հիշվում է **Ճրպա Սբ Խաչ** վանքը: Մինչև համիդյան կոտո-րածներն **Ասպստանը** գավառի առավել բազմամարդ գյուղերից էր՝ ավելի քան 100 տուն հայ բնակչությամբ: Հայերի զանգվածային վերադարձի շնորհիվ, 1914 թ., այստեղ կրկին ապրում էր շուրջ 100 տուն հայ:
6	Ավզան (Օզան)			Հիմնական բնակիչներն ասորիներն էին, որոնք ունեին եկեղեցի, որը հաճախում էին նաև հայերը:
7	Ատես (Ադիս)			Հիմնական բնակիչներն ասորիներն էին, որոնք ունեին եկեղեցի, որը հաճախում էին նաև հայերը:
8	Արջի (Էրճի)			Հիմնական բնակիչներն ասորիներն էին, որոնք ունեին եկեղեցի, ուր հաճախում էին նաև հայերը:
9	Բաբլասան	Սբ Թադևոս (Սբ Հովհաննես)		
10	Բազ (Պազ)	Սբ Հակոբ, Սբ Հովհաննես)	1	Գյուղում պահպանվել էին 2 ավերակ եկեղեցի՝ **Կաթնով Սբ Խաչ** և «**Շուշա-շարբաթ**» անուններով:
11	Բաթկան	եկեղեցի (ավերակ)		
12	Բաշկալե (Հադամա-կերտ), քա-ղաք	Սբ Երրորդություն, Սբ Ստեփաննոս	1	Պահպանվել էր հնագույն **Հադամա-կերտ** (Բաշկալե) կիսավեր բերդը: **Բաշ-կալեում** էր գտնվում **Աղբակի** (Հաք-քարի) **վանական թեմի** (վիճակ) առաջ-նորդարանը, որի հոգևոր տեսչությանը ենթակա էին ինչպես **Հաքքարիի** գա-վառի, այնպես էլ հարևան **Սալմաստի** և **Ուրմիայի (**Պարսկաստան**)** հայաբնակ գյուղական ու քաղաքային բնակավայ-րերը:
13	Բարս (Փարս)	Սբ Խաչ (Սբ Հովհաննես, ավերակ)		
14	Բժնկերտ (Վժնկերտ, Մժնկերտ)	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ	1	
15	Երնկանի	Սբ Ստեփաննոս Նախա-վկա		Գյուղի մոտակայքում գտնվում էր **Սբ Աստվածածին** ավերակ վանքը: **Երնկա-նիում** պահպանվել էին **Սբ Ծիրանավոր** և **Սբ Սարգիս** ավերակ եկեղեցիները: Միջնադարում հիշվում է **Զուխտակ Սբ Նշան** եկեղեցին: Մինչև համիդյան կո-տորածները **Երնկանին** գավառի առա-վել բազմամարդ գյուղերից էր՝ 80-100 տուն հայ բնակչությամբ (1914 թ.՝ ընդա-մենը 49 տուն): **Երնկանիում** պահպան-վել է Վանի թագավորության դարա-շրջանի ամրոց:
16	Ջարգավկ	եկեղեցի (ավերակ)		

17	Թաղիկ (Հայ Միիբա, Միրավա)	եկեղեցի (ավերակ)		Պահպանվել էին բերդի ավերակներ:
18	Լաշկոտ (Լաշկերտ)	եկեղեցի (ավերակ)		**Լաշկոտից** հյուսիս գտնվող **Խանջուլիս** նախկին հայաբնակ գյուղում պահպանված **Սբ Մարգիս** կիսավեր եկեղեցին շարունակում էր մնալ Աղբակի հայերի կարևորագույն ուխտավայրերից մեկը: Հայկական գերեզմանոցներ էին պահպանվել նաև մոտակա **Հալկան** (Լալկան) և **Շամանց** (Շամանիս) բնակավայրերում:
19	Խառատուն	Սբ Աստվածածին		
20	Կարաբուլի (Քարաբլուր)	եկեղեցի (ավերակ)		Գյուղից հս.-արևելք՝ **Մայդանոկա** լեռան գագաթին, կար ուխտավայր՝ «ճգնավորի գերեզման» անունով: Մոտակա **Բաբլաշեն** (Պապկաշեն) երբեմնի հայաբնակ գյուղում կար ուխտավայր-մատուռ, որը քրդերի համար նույնպես սրբատեղի էր:
21	Հերեսան (Երիցանք)	Սբ Աստվածածին	1	Մինչև համիդյան կոտորածները **Հերեսանը** գավառի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 80–100 տուն հայ բնակչությամբ: 1914 թ. հայերի զանգվածային վերադարձի շնորհիվ այստեղ վերահաստատվել էր շուրջ 70 տուն հայ:
22	Հուզի (Խուզի)			Հիմնական բնակիչներն ասորիներն էին, որոնք ունեին եկեղեցի, որը հաճախում էին նաև հայերը: **Հուզիից** հարավ գտնվող **Չալդրան** կամ **Չարդերան** (քրդերեն՝ «չորս վանք») գյուղում պահպանվել էին վանքի մնացորդներ:
23	Մալգավա (Մալքավեն)	Սբ Խաչ		Մինչև համիդյան կոտորածները **Մալգավան** գավառի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 80 տուն հայ բնակչությամբ (1914 թ.՝ ընդամենը 37 տուն):
24	Զուխ (Ծուղ)	Սբ Հովհաննես		
25	Ռասուլանց (Ռասուլանիս)			
26	Սորադեր (Զորադիր)	Սբ Աստվածածին		Գյուղը հռչակված էր **Զորադիր Սբ Էջմիածին** վանքով: **Սորադերում** կային նաև 2 ավերակ եկեղեցիներ: Մոտակայքում գտնվում էր **Սիկալ իշխանի** բերդը: **Սորադերից** հյուսիս-արևելք՝ **Մեծ Զաբի** ձախափնյակում գտնվող **Ալազի** և **Ալբես** (**Ալպիս**, **Աղբիք**) գյուղերում պահպանված հին ջրաղացները կոչվում էին «Հայոց ջաղացք»:
27	Սորան	եկեղեցի		Անմիջապես հարավից Սորանի հարևանն էր **Սորախաչ** (Սուրբ Խաչ) գյուղը, որը պատմական Օսի գյուղն էր՝ Արծրունիների տոհմական դամբարանը: Գյուղում պահպանվել էին **Սբ Խաչ** (Հնուդվան) հինավուրց վանքի ավերակները, ինչպես նաև՝ կիսավեր ամրոցներ: Բերդ կար նաև մոտակա **Բերդուկ** ասորաբնակ գյուղում:

28	Վանքիգեղ (Սբ Բարդուղիմեոս, Դիեր)	Սբ Ստեփաննոս (ավերակ)	1	Գյուղում էր գտնվում համահայկական սրբավայրի հռչակ վայելող **Սբ Բարդուղիմեոս Առաքյալի** վանքը (ասորերեն՝ «Deyr», որտեղից էլ հայկական Դիեր ձևը), որը կառուցվել է հնագույն **Արեբանոս** (Ուրբանոս) քաղաքում, ուր Ք. հ. I դ. նահատակվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու հիմնադիրներից մեկը՝ **Սուրբ Բարդուղիմեոս առաքյալը**: Վանքի անունով XIV–XVI դդ. Աղբակի հյուսիսը կոչվում էր **Բարմի երկիր**: Վանքի հոգևոր տեսչության ներքո գտնվում էին ինչպես **Հաքքարիի**, այնպես էլ հարևան **Պարսկաստանի Սալմաստի** և **Ուրմիայի** հայաբնակ գավառները: Հս.–արևելքում գտնվում էր «**Վիշապու հեր**» (իմա՝ «Վիշապի քարայր», քրդ. Škav-te Eždeharē) քարանձավը, որը, հեթանոսական պաշտամունքային վայր լինելով, չէր կորցրել սրբավայրի իր կարևորությունը նաև քրիստոնեության ընդունումից հետո: Քարայրի մուտքի վրա երևում էին գրեր և փորագրված խաչեր: Գյուղից հարավ գոյություն ուներ սրբացված ծառերի մի պուրակ: **Վանքիգեղը** 1890-ական թթ. Աղբակի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ ավելի քան 100 տուն հայ բնակչությամբ (XX դ. սկզբին՝ ընդամենը 45–50 տուն):
29	Փիս (Փիզան, Փաստի)	Սբ Աստվածածին		Գյուղում ապրում էին նաև ասորիներ, որոնք ունեին իրենց եկեղեցին: Սորանից բավական հարավ՝ **Մերքեզ** (պատմ. Ականիք) լեռան արևելյան ստորոտին գտնվող **Ակնիս** (Աքնիս) գյուղում, պահպանվել էր հայկական ավերակ եկեղեցի: Հայկական վանքի հետքեր կային նաև **Մեծ Զաբ** գետի աջակողմյան **Ճամբկան** վտակի ակունքների մոտ գտնվող **Դերիկ** (քրդ. «վանքի գյուղ») գյուղում: Հայկական տապանաքարեր էին պահպանվել նույն վտակի **Մեծ Զաբ** թափվելու վայրից մի փոքր հարավ գտնվող **Խաչասոր** (Խաչաձոր) գյուղում:
30	Քելագոմ (Գայլագոմ)			

XIX դ. 60–90-ական թթ. հայաթափ եղած բնակավայրեր՝ Ալազի, Ալբես կամ Ալպիս, Ակնիս, Ամպիկ կամ Անբի, Աշկերտ կամ Աշքիթան (Վերին), Բաբլաշեն կամ Պապկաշեն, Խանջուլիս, Խաշանիս կամ Խաշնոց, Նաթրոկ, Շամանց կամ Շամանիս, Շարնիս կամ Շարոնիս, Ռըկան կամ Ըռեկան (Ուռեկան, Ներքին), Սորախաչ (Սուրբ Խաչ):

Աղբակը նույնպես Վանի նահանգի առավել հայաթափ եղած գավառներից էր: Այդ երևույթն ուներ երկու գլխավոր պատճառներ: Նախ՝ գավառի թուրք-պարսկական սահմանագլխին գտնվելը, ինչով պայմանավորված XVI–XIX դդ. ընթացքում պարբերաբար տեղի ունեցող պատերազմների և ռազմական ընդհարումների ժամանակ հայ բնակչությունն անասելի զրկանքներ ու ծանր կորուստներ է կրել: Երկրորդ, ի հետևանս քրդական այլևայլ ցեղերի չընդհատվող ներհոսքի՝ XX դ. սկզբին Աղբակում ձևավորվել էր ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակ ի վնաս հայերի: Հատկապես աղետալի էին տխրահռչակ **շեյխ Զալալեդդինի** հրո-

սակների 1877–1878 թթ. ասպատակությունները և 1895–1896 թթ. համիդյան կոտորածները: Այդ ընթացքում հարյուրավոր հայ ընտանիքներ (մոտավոր հաշվարկներով՝ շուրջ 1000 տուն կամ 8000 մարդ) հարկադրված էին հեռանալ իրենց բնօրրանից գերազանցապես հարևան **Սալմաստի** գավառ (**Պարսկաստան**): Բացի այդ, ջարդի սպառնալիքը հարկադրել էր **Աշկերտ**, **Բաբլասան**, **Բարս** կամ **Փարս**, **Զարգավկ**, **Կարաբուլի**, **Սորադեր** գյուղերի բնակիչներին դավանափոխ լինել: Մինչև 1915 թ. այդ հայերը համարվում էին «**քուրդ**» (իմա՛ քրդացած), թեև գաղտնի պահել էին ազգային սովորություններն ու ինքնությունը: Ընդհանրապես, Աղբակի ողջ տարածքում պահպանվել էին բազմաթիվ հայկական հուշարձաններ (կանգուն կամ ավերակ): Անգամ բնակավայրերի մի զգալի մասի անվանումները, թեկուզ՝ աղավաղված, բայց պահել էին իրենց հայեցիությունը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին, չնայած նախորդ մի քանի տասնամյակների բացասական ժողովրդագրական միտումներին, գավառում դեռ բնակվում էին մեծաթիվ հայեր (շուրջ **8500** մարդ, որոշ տվյալներով՝ 1870-ական թթ. **15000–16000**-ի փոխարեն): Աղբակի բնակչության մի զգալի մասն էլ կազմում էին ասորիները (նեստորականներ), որոնք տեղաբաշխված էին հիմնականում գավառի հարավային մասի մեկ տասնյակից ավելի գյուղերում, երբեմն՝ հայերի հարևանությամբ: Ի դեպ, հոգևոր առումով նրանք գտնվում էին **Սուրբ Բարդուղիմեոսի** վանահոր տեսչության ներքո: 1914–1915 թթ. թե՛ հայերը (ներառյալ՝ «քրդացածները»), թե՛ ասորիները՝ ավելի քան 11000 մարդ, հիմնականում զոհ գնացին **Ցեղասպանությանը** (ասորերեն՝ **Seyfo**):

17) Գյավառ և Զուլամերիկ

Սահմանակից այս երկու գավառները **Վանի նահանգի** ամենահարավային հայաբնակ վարչամիավորներն էին՝ գավառակի (թրք. kaza) կարգավիճակով: **Գյավառը** (Գավառ, Կևեռ, համապատասխանում է պատմական **Կորճայքի Որսիրանք** գավառին) հիմնականում ընդգրկում էր **Մեծ Զաբ** գետի ձախափնյա **Նեհիլ-չայ** (քրդ.-թրք. «ձորագետ») վտակի հովիտը, ուր տարածվում էր արգավանդ **Գյավառի դաշտը** (բրբռ. Գյավառա դուզ): Գյավառի արևելյան հատվածներն ընդգրկված էին հիմնականում հնագույն **Պարսկահայքի** տարածքով հոսող և **Ուրմիո լիճ** (Կապուտան) թափվող **Նազլուչայի** (պատմ. Տարոնոգետ) վերին հոսանքի շրջանում (այդ մասը հնում կոչվել է **Այլիի** կամ **Էլոյի ջուր**): Սահմանակից էր հյուսիսից՝ **Աղբակին**, արևելքից սահմանն անցնում էր **Զագրոսի** ճյուղավորումներով, **Պարսկաստանի Բրադոստ** և **Սոմայ** գավառներին (պարսկերեն՝ mähäl), հարավից՝ **Շամդինանին** (**Վանի նահանգի** միակ վարչամիավորը, ուր մշտական հայ բնակչություն չի եղել), իսկ արևմուտքից՝ **Զողայի** լեռներով, **Զուլամերիկին**: Գյավառի կենտրոնը **Դիզա** կամ **Դիզե** (Դիզա-Գյավառ) գյուղաքաղաքն էր, որն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ուներ 300 տուն հայ բնակիչ (ավելի քան 2500 մարդ): Ինչպես ցույց է տվել տեղանունների քննությունը, **Գյավառը** միջնադարում ունեցել է հոծ հայ բնակչություն: Պատմական երկերից և հայերեն ձեռագրերի հիշատակարաններից հայտնի են հետևյալ բնակավայրերը՝ **Այլի** կամ **Էլի** (XX դ. սկզբին՝ Էլե), **Առինջ** (երկուսն էին՝ Վերին և Ներքին), **Գավառան Սբ Սարգիս** (վանք), **Կակենից** (XX դ. սկզբին՝ Կարկենիս), **Մութվանք** (XX դ. սկզբին՝ Թուվանի), **Որցյանց** կամ **Որսիրանից գյուղ** (XX դ. սկզբին՝ Սուրիան), **Սբ Ստեփաննոս** (վանք), **Սուրենապատ** (XX դ. սկզբին՝ Սուրաբան): Գյավառի արևմտյան մասում՝ **Մեծ Զաբի** ձախ ափին, գտնվում էին **Մութուլանիս** և **Ֆութուլանիս** գյուղերը, որոնց անունները բխում են հնագույն **Կորճայքի** գավառներից մեկի անվան՝ «**Աշխարհացույց**»-ի ձեռագիր որոշ օրինակներում հանդիպող **Մթողանք** և **Ութողանք** տարբերակներից: Հայեցի անվանումները շարունակում էին պահել **Ալվար**, **Ավարտ**, **Բերդարան**, **Բերդառաշ**<**Բերդառաջք**, **Բերդիկ**, **Խուռակիս**, **Շատան** կամ **Շատախ**, **Սինավա**< **Շենավան** բնակավայրերը: Մինչև XIX դ. 90-ական թթ. հայեր էին ապրում Գյավառի **Բաժերգա(h)**, **Խրվաթա**, **Կադիյան** գյուղերում, որտեղից նրանք աստի-

ճանաբար դուրս եկան: XX դ. սկզբին Գյավառի միակ հայաբնակ գյուղը մնացել էր **Կարպելը:** Քրիստոնյա բնակչությունը հիմնականում կազմում էին նեստորական ասորիները, որոնք կենտրոնացած էին **Գյավառի դաշտում** (բնակչության մեծամասնությունը) և հարավարևելյան՝ **Պարսկաստանի** սահմանագլխին ընկած **Դեյր** կամ **Մարբիշո** գյուղախմբում (հինավուրց համանուն վանքի շրջանը, որը համապատասխանում է պատմական **Պարսկահայքի Այլի** կամ **Էլի** գավառին):

Զուլամերիկը (Զուլամերկ, Ճուլամերիկ, համապատասխանում է պատմական **Կորճայքի Փոքր Աղբակ** և **Ճահուկ** գավառներին) գրավում էր **Մեծ Զաբի** միջին ավազանի հյուսիսային հատվածը, ինչպես նաև **Տիգրիսի** ձախակողմյան **Արևելյան Խաբուր** վտակի վերին հոսանքի շրջանը: Սահմանակից էր հյուսիսից՝ **Հաքքարիի** (Այգառքի) լեռներով, **Շատախ**, **Նորդուզ**, **Աղբակ** գավառներին, արևելքից՝ **Գյավառին**: Զուլամերիկը հարավից սահմանակից էր **Մոսուլի**, իսկ արևմուտքից՝ **Բիթլիսի** և **Դիարբեքիրի** նահանգներին: Կենտրոնը **Մեծ Զաբի** աջ ափին գտնվող **Զուլամերիկ** բերդավանն էր (պատմ. Զլայմար կամ Զղմար), որը մինչև 1897 թ. **Հաքքարիի** գավառի (թրք. sancak) կենտրոնավայրն էր: 1914 թ. **Զուլամերիկն** ուներ շուրջ 600 տուն՝ բացառապես քուրդ բնակչությամբ: Մինչդեռ XIX դ. առաջին կեսին այստեղ եղել է հոծ հայություն, որը բերդավանը լքել է 1840-ական թթ. վերջին (1850-ական թթ. այստեղ դեռ մնացել էին 2 հայկական ամայի եկեղեցի): Միջնադարում համատարած հայաբնակ են եղել ինչպես բուն Զուլամերիկի գավառի հյուսիսային ձորահովիտները, այնպես էլ ավելի արևմուտք՝ **Արևելյան Խաբուրի** ակունքներն ընդգրկող **Բեյթ-Շաբաբի** գյուղախումբը (պատմական **Կորճայքի Կորդրիք** գավառը): Դրա ապացույցն են XX դ. սկզբին նշված տարածքներում պահպանված բազմաթիվ հայահունչ տեղանունները (**Ալքիկ**<**Ալկի**, **Ալկեքար**, **Աղվանիս**<**Աղավնիս**, **Արջանիս**<**Արջանց**, **Արվախ**<**Ավերակ**, **Ավրանիս**<**Ավրանց**, **Արամիան**, **Գիրխաչ**, **Գյազնախ կամ Գյազնա**<**Գանձակ**, **Գյախե**<**Գեղ**, **Գովիկ**<**Գոմք**, **Զարանիս**<**Զարանց**, **Թրկունիս**, **Խնդրունիս**<**Խնձորենց** կամ **Խնձորենիք**, **Կաճետ**,**Կասպիանիս**<**Կասպյանց**, **Կիտիր**<**Գետեր**, **Հարոս**, **Սակ**, **Սրմխաթա**<**Սուրբ Խաչ**, **Փրկանիս**<**Բրգանց**, **Քոչանիս** կամ **Քոչանես**<**Կոճանց** և լն): Ընդօրինակված որոշ ձեռագրերից հայտնի են նաև **Անապատիկ** (եկեղեցին՝ **Սբ Աստվածածին**, XX դ. սկզբին՝ Նապատկի), **Դուդուշի թաղ** (եկ. **Սբ Գևորգ**, XX դ. սկզբին՝ Դադուշ), **Խորաձոր** կամ **Թխում** (Սբ Աստվածածին վանքով) բնակավայրերը: XX դ. սկզբին հայ բնակչությունը պահպանվել էր գերազանցապես **Զուլամերիկ** բերդավանի անմիջական շրջակայքում ընկած 4-5 գյուղերում: Դրանց շարքում առանձնանում էր գավառակենտրոնի «թաղ»-արվարձանը համարվող **Փական** ավանը:

Զուլամերիկի բնակչության հիմնական հատվածը դարձյալ կազմում էին նեստորական ասորիները, որոնց նախնիներն այս տարածքում հայերի հետ կողքկողքի բնակվել են հնագույն ժամանակներից: **Մեծ Զաբի** ձախափնյա, ինչպես նաև աջափնյա՝ **Զուլամերիկ** բերդավանից հարավ ընկած դժվարամատչելի լեռնային տարածքը մտնում էր **Ասորական մարզի** մեջ, որը կազմված էր 5 ինքնավար ասորական մելիքություններից: Այստեղ արգելված էր ինչպես թուրք պաշտոնյաների, այնպես էլ քրդական ցեղերի մուտքը: Տեղի արիասիրտ և ռազմատենչ ասորիները, որոնց կոչում էին «ջուլոներ», զենքը ձեռքին պաշտպանել էին իրենց անկախությունն ու մարդկային արժանապատվությունը շուրջ 5 դար: **Ասորական մարզը** կառավարվում էր առանձին մելիքական տոհմերի կողմից, որոնք, իրենց հերթին, ընդունում էին նեստորականների հոգևոր առաջնորդի՝ **Մարշիմունի** (ասորական կաթողիկոս) գերիշխանությունը: Վերջինիս կենտրոնավայրը **Զուլամերիկից** մի փոքր հյուսիս-արևմուտք գտնվող **Քոչանիս** (Քոչանես, Կոճանց) ավանն էր: Ընդհանուր առմամբ, ասորիները XX դ. սկզբին կազմում էին **Զուլամերիկի գավառի** բնակչության 70 %-ը:

1915 թ. **Զուլամերիկի** հայերն ու ասորիները, չնայած հերոսական ինքնապաշտ-

պանությանը, ենթարկվեցին զանգվածային կոտորածի թուրքական բանակի կանոնավոր զորամասերի և քրդական համիդիեների ու վաչկատուն ցեղերի (աշիրեթների) կողմից: Նույն ճակատագրին արժանացավ նաև **Գյավառի** հայ և ասորի բնակչությունը: **Դիզայի** չափահաս արական բնակչությունը վայրագաբար ոչնչացվեց հարևան **Բրադոստի** տարածքում գտնվող **Գյանգյաչինի դաշտում** (Պարսկաստան): 2 գավառների վերապրած հայերն ու ասորիները (շուրջ 35000 մարդ), հարկադրված էին լքելու իրենց բնօրրանը՝ ապաստանելով նախ՝ **Պարսկաստանում**, ապա՝ 1918 թ. **Իրաքում**:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
		ա/ Գյավառ		
1	Դիզա (Դիզա-Գյավառ), գյուղաքաղաք	Սբ Հովհաննես, Սբ Լուսավորիչ	1	
2	Կարպել (Գարբել)	Սբ Աստվածածին (Սբ Թադևոս)	1	Գյուղում պահվել է սրբացված ձեռագիր **Ավետարան** (XII դ.): Գյավառի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. 80-90 տուն հայ բնակչությամբ:
		բ/ Ջուլամերիկ		
1	Խալիլան	Եկեղեցի		
2	Խանանց (Խանանիս, Խանաս Ներքին)	Եկեղեցի		
3	Սերման (Սիլման)	Եկեղեցի		
4	Փական (Բագան)	Սբ Ստեփաննոս	1	**Փականը** Ջուլամերիկի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ որոշ տվյալներով՝ մինչև 200 տուն բնակչությամբ: Գյուղում պահվել է «**Կարմիր Ավետարան**» սրբացված ձեռագիրը (XIII դ.): Մի փոքր հյուսիս գտնվում էին հայկական **Սբ Աստվածածին** վանքի ավերակները:
5	Փիրան			

18) Վան քաղաք

Նահանգի կենտրոնավայրը՝ հինավուրց **Վան քաղաքը**, Արևմտյան Հայաստանի առավել երևելի բնակավայրերից մեկն էր: Այն գտնվում էր **Վանա լճի** արևելյան ափին՝ լճափից շուրջ 6 կմ հեռավորության վրա: Ք.ա. IX դ. կեսերից մինչև IV դ. վերջը Վանը **Հայոց պետականության** մայրաքաղաքն էր: Իր նշանակությունը քաղաքը չկորցրեց նաև հետագա հարյուրամյակներին, իսկ 908-1021 թթ. դարձավ **Վասպուրականի Արծրունյաց թագավորության** մայրաքաղաքը: Օտար նվաճողների ասպատակությունների և հատկապես օսմանյան դաժան տիրապետություն հետևանքով, թեև **Վանը** զգալի անկում էր ապրել, սակայն XIX դ. կեսերից վերագտավ իր համահայկական նշանակությունը՝ դառնալով հայ ազգային-ազատագրական շարժման և մշակույթի գլխավոր կենտրոններից մեկը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին **Վանը** ոչ միայն **Արևմտյան**, այլև ողջ **Հայաստանի** առավել

հայաշատ քաղաքներից էր, որի ավելի քան **45000** բնակչից **30000**-ը հայեր էին (66%-ը): Մահմեդական բնակչությունը (ավելի քան **15000** մարդ) կազմում էին հիմնականում քրդական ծագում ունեցող թուրքերը: Կային նաև փոքրաթիվ գնչուներ (մտրուբներ) և պարսիկներ:

Վանը կազմված էր **Քաղաքամեջ** և **Այգեստան** հատվածներից: Առաջինը տարածվում էր **Վանա բերդի** անմիջական շրջակայքում, կից 2 «արվարձաններով»՝ հայաբնակ **Հայկավանքը** (բրբռ. Խավկավանք) և թուրքաբնակ **Շամիրամի թաղը**: Դեպի արևելք փռված էր **Այգեստանը** (բրբռ. Էկեստար), որն իր հերթին բաժանվում էր մի քանի թաղերի. **Արարք** (մինչև XIX դ. առաջին 30-ամյակը առանձին գյուղաքաղաք էր), **Կլոր դար**, **Սուրբ Հակոբ** (Նորշեն թաղամասով), **Հայնկույսներ** (Անգուսներ) և **Նորաշեն**: Բոլոր նշված թաղերն ունեին ավելի մանր ենթաբաժանումներ, որոնց հիմքում ընկած էր փողոցները կամ թաղամասերը ոռոգող «քյահրեզ»-ջրհորների ցանցը: **Սուրբ Հակոբ** թաղին կից գտնվում էր **Ակոբի** (<Ագռավուքար, թրք.Akköprü) երբեմնի հայաբնակ գյուղը, որը դիտվում էր **Վանի** «թաղ»-արվարձանը (XX դ. սկզբին թուրքեր էին բնակվում):

Ամբողջովին այգիների մեջ թաղված **Այգեստանը**, ուր կենտրոնացած էր **Վանի** հայ բնակչության գերակշիռ մեծամասնությունը (շուրջ 27000 մարդ), հիմնականում ոռոգվում էր դեռ Վանի թագավորության դարաշրջանում հիմնարկված և առայսօր գործող ջրանցքներից: Դրանցից հոչակավոր «**Շամիրամի առուն**» («Շամիրամի ջուր»), որի հիմնադիրն էր **Մենուա** հզոր արքան (Ք. ա. 810-786), սկիզբ էր առնում **Հայոց ձորի** հարավից, իսկ երկրորդը՝ Ռուսա I-ի կառավարման շրջանում (Ք. ա. 735-713) փորված «**Ռուսայի առուն**», սկսվում էր **Վարագա** լեռնազանգվածի արևելյան մասում գտնվող **Քեշիշ գյոլ** (թրք.«երեցի լիճ») արհեստական լճակից: Համաշխարհային հնագիտության գանձարանում մշտապես գրանցված են վանյան (ուրարտական) հնագույն հուշարձանները՝ Վանի թագավորության հիմնադիր **Սարդուրե I**-ի կողմից (Ք.ա. 840-825) կառուցված քաղաքի հզոր միջնաբերդը՝ Այգեստանի հյուսիսում բարձրացող **Ագռավաքար** (Ակոբու քար) լեռան արևելյան մասում, որը հայերը կոչում էին **Ծռտոտ քար,** Ռուսա I-ի կողմից կառուցված **Ռուսախինիլի** (թրք.Toprakkale) մայրաքաղաքը, նույն լեռնազանգվածի արևմտյան հատվածում գտնվող «**Միհերի դուռը**»՝ Վանի թագավորության համադիցարանի (պանթեոն) քարե վկայականը:

Վանը հայտնի էր իր բազմաթիվ եկեղեցիներով: Քաղաքամեջի հատվածում դրանք ութն էին.

1. **Սբ Նշան կամ Էջմիածին**. Վանի (Վասպուրականի) թեմական առաջնորդանիստն էր:

2, 3. **Սբ Պողոս և Սբ Առաքյալ (Սբ Պետրոս) կամ ընդհանուր՝ Սրբոց Առաքելոց:** Իրար կից կառուցված լինելու համար ժողովուրդը այս սրբավայրերը կոչում էր Ջուխտակ ժամտուն (իմա՝ եկեղեցի) ընդհանուր անվամբ:

4. **Սբ Տիրամայր** կամ **Սբ Աստվածածին** (XVII դ., որպես կանոն, հիշվում է **Տիրամորա Սբ Աստվածածին և Սբ Գաբրիել Հրեշտակապետ** անունով**):**

5. **Սբ Վարդան:**

6, 7. **Սբ Սահակ** և **Սբ Ստեփաննոս** (դարձյալ՝ իրար կից):

8. **Ծիրանավոր Սբ Աստվածածին**:

Եվս մեկը՝ **Սբ Սիոնը**, որը գտնվում էր բերդաժայռի ստորոտին, վերածվել էր մզկիթի:

Հայկավանքի Սբ Աստվածածին եկեղեցին (երբեմնի վանք) ժողովրդի կողմից կոչվում էր «Յոթնխորան ժամտուն»: Ժամանակին 4 եկեղեցի է գործել նաև **Շամիրամի թաղում**, որոնք, սակայն, հայերի հետզհետե հեռանալուն զուգահեռ, ամայացել էին և ավերվել թուրքերի կողմից (XX դ. սկզբին մնացել էին դրանց հիմքերը կամ հողակույտերը):

Այգեստանի եկեղեցիները չորսն էին.

1. **Արարուց** (Այրիարույց) **Սբ Աստվածածին՝** Արարքում:

2. **Սբ Հակոբ՝** մերձակա **Սբ Հակոբ Մծբնացի** և **Թուխմանուկ** մատուռներով՝ նույնանուն թաղում: **Սուրբ Հակոբից** հյուսիս՝ **Ագռավաքարի** հարավային լանջին, գտնվում էր **Սբ Աստվածածի**ն մատուռ-ուխտավայրը:

3.**Տիրակառույց Սբ Աստվածածին** և «**Պստիկ տաճար**» կամ **Սբ Աստվածածին՝ Հայնկույսներում**:

Կլոր դարում գտնվում էին **Սբ Ծիրանավոր** և **Սբ Օհաննես** (Թուխ մանուկ) անուններով 2 կիսավեր եկեղեցիներ, որոնք լքվել էին նշված թաղի մի մասից հայերի հեռանալու պատճառով: 1914 թ. **Վան** քաղաքի եկեղեցիներում պահվում էին շուրջ 400 ձեռագիր մատյաններ: Հատկապես հարուստ էին առաջնորդանիստ **Սբ Նշանի** (Էջմիածին), **Սրբոց Առաքելոցի**, **Սուրբ Սահակի** և **Սուրբ Վարդանի** հավաքածուները: Այդ ձեռագրերից փրկվել և ներկայումս **Մաշտոցի** անվան **Մատենադարանում** պահվում են 265-ը:

Վան քաղաքն Արևմտյան Հայաստանի խոշոր կրթական կենտրոններից մեկն էր: Առաջին աշխարհամարտի նախօրեին առանձնակի հռչակ էին վայելում **Հայնկույսներում** գտնվող **Երամյան** և **Կեդրոնական վարժարանները** (միջնակարգ կրթության ծրագրով): 1879-1884 թթ. գործել է նաև ժողովրդի կողմից «**Վարժապետանոց**» կոչված հայտնի վարժարանը, ուր կրթություն են ստացել հայ քաղաքական և մշակութային բազմաթիվ երևելի գործիչներ: Հետագա տասնամյակներին այն վերածվեց ուսուցիչների վերապատրաստման կենտրոնի: Վանում գործում էին նաև կրթական այլ հաստատություններ: Քաղաքամեջում էին գտնվում **Հիսուսյան** (տղաների) և **Շուշանյան** (աղջիկների), ինչպես նաև **Հայկավանքի** եկեղեցուն կից թաղային դպրոցները: **Այգեստանի** տարածքում, ըստ թաղամասերի, եղել են հետևյալ կրթական հաստատությունները.

ա) **Արարք**- **Սբ Թարգմանչաց** թաղային վարժարան և **Սբ Մատթեոսյան** նախակրթարան:

բ) **Նորաշեն**- **Սանդխտյան** (Մարիամյան) օրիորդաց դպրոց («վարժարան») և նախակրթարան:

գ) **Սուրբ Հակոբ**- Սբ Ղուկասյան դպրոց:

դ) **Հայնկույսներ**- տղաների և աղջիկների «**Գայանյան**» նախակրթարաններ:

XIX դ. վերջին գործել են նաև **Բարաղամյան** և **Հովհաննիսյան** մասնավոր նախակրթարանները: Բացի այդ, Վանում լայն ճանաչում ունեին **ամերիկյան** և **գերմանական** քոլեջները, **Դոմինիկյան միաբանության Լատինական դպրոցը**, ուր հիմնականում հաճախել են հայ երեխաներ: 1914 թ. Վանի հայկական դպրոցներում աշխատել է 259 ուսուցիչ, իսկ հայ աշակերտության ընդհանուր թիվը կազմել է 4450 երեխա: Հատկանշական է, որ քաղաքաբնակ հայերի կեսից ավելին գրագետ էր: Վանում գործել են հայկական մարմնակրթական ակումբներ, իսկ **Երամյան վարժարանն** ունեցել է ֆուտբոլային թիմ:

Անուրանալի է այն մեծ ներդրումը, որ ունեցել է Վանի հայությունը **հայ ազգային-ազատագրական շարժման** մեջ: Այստեղ են ձևավորվել առաջին ազատագրական գաղտնի խմբակները («**Միութիւն ի փրկութիւն**», «**Սև խաչ**»): Հայ իրականության մեջ առաջինը **Վանում** ստեղծվեց քաղաքական կուսակցություն՝ **Արմենական կազմակերպությունը** (1885 թ., ի դեպ, միակը բուն հայրենիքում): Միաժամանակ **Վանը** Արևմտյան Հայաստանում **ՀՅ Դաշնակցության** խոշոր կենտրոններից մեկն էր: ՀՅԴ և Սահմանադիր ռամկավար կուսակցությունները **Վանում** ունեին իրենց տպարանները, ուր հրատարակում էին «**Աշխատանք**» (**ՀՅԴ**) և «**Վան-Տոսպ**» (**ՍՌԿ**) պարբերականները, որոնք իրենց ուրույն տեղն ունեն հայ մամուլի պատմության մեջ: 1915 թ. ապրիլին լավ կազմակերպված ինքնապաշտպանության շնորհիվ Վանի հայ բնակչությունը փրկվեց բնաջնջումից՝ ջախջախելով դարավոր թշնամուն: Ավելին, հենց կռիվների ընթացքում՝ մեկ ամսից էլ պակաս ժամկետում, ձևավորվեց հայկական կառավարություն՝ **Արամ Մանուկյանի** գլխավորությամբ: Այս փաստի


Վան քաղաքի բնակչության ազգային կազմը 1914թ.
Ազգային կազմ
Հայեր
45350
(66%)
Թուրքեր
15 000
(33%)
Հրեաներ
350 (1%)
Հայաբնակ թաղեր և թաղամասեր
Թրքաբնակ թաղեր և թաղամասեր
Պլյուրալիստ թաղամասեր
Խառնաբնակ ու հատատարածքներ
Պետական հաստատություններ, զբաղեցնելով, զարգացնելով, վերականգնելով և այլն)
Առաջնորդարան ենթերգի
Թաղային ենթերգի
Պետական (օսմանեան) ուսումնական հաստատություններ
Վարժարաններ (միջնակարգ կրթություն տվող դպրոցներ)
Դպրոցներ
Ս. Գրիգոր Լուսաւորչի
Ս. Գրիգոր Ս. Նաստասիայի
«Ռուսական»
«Սեան Դուռ»
Ս. Գրիգոր Ս. Նաստասիայի
Ս. Գրիգոր Ս. Նաստասիայի
Ս. Գրիգոր Ս. Նաստասիայի

հետ ստիպված էր հաշվի նստելու 1915 թ. մայիսի 6-ին **Վան** մտած ռուսական բանակի հրամանատարությունը, որը մայիսի 7-ին **Ա.Մանուկյանին** նշանակեց նորաստեղծ **Վանի ժամանակավոր վարչության** ղեկավար՝ դրանով իսկ ճանաչելով հայկական ինքնավարությունը: Ցավոք, հայկական պետականության արտահայտությունը հանդիսացող ինքնատիպ այդ կառույցը գոյատևեց միայն երկու ամիս և ռուսական բանակի անսպասելի, բացահայտ միտումնավոր նպատակներով կազմակերպված 1915 թ. հուլիսյան նահանջի հետևանքով դադարեցրեց իր գոյությունը: Սակայն վասպուրականցին, նույնիսկ այդ դժնդակ պայմաններում, չկտրվեց հայրենի բնօրրանից: 1915-1917 թթ. ընթացքում, չնայած ռուսական զինվորական իշխանությունների կողմից բազմիցս հարուցված խոչընդոտներին և բացահայտ հակահայ քաղաքականությանը, վերապրած հայերը՝ քաղաքական և հասարակական կազմակերպությունների աջակցությամբ, մշտապես փորձեցին վերականգնել ավերված բնօրրանները, առաջին հերթին՝ Վան քաղաքը: 1917 թ. աշնանը նորաստեղծ Վանի և Բաշկալեի (Աղբակ) օկրուգներում վերահաստատված հայերի թիվը կազմում էր շուրջ **28000** մարդ, որից **5500-6000-ը՝ Վանում**: 1917 թ. վերջին, երբ թուրքական նոր հարձակման սպառնալիքի ներքո խզվել էր կապն **Արարատյան երկրի** և **Երևանի Ազգային խորհրդի** հետ, տեղի քաղաքական ուժերը, ելնելով խիստ վտանգավոր իրավիճակից, որոշեցին **Վանում** ստեղծել ժամանակավոր ինքնակառավարման մարմին՝ **Կոստի Համբարձումյանի** ղեկավարությամբ (1918 թ. հունվարի 1-ին): Սակայն վասպուրականցուն այս անգամ ևս վիճակված չէր հայրենի եզերքում վայելելու ազատ կյանք: 1918 թ. փետրվարին վերսկսված օսմանյան գերակշիռ ուժերի ներխուժումը կրկին հարկադրեց նրան բռնելու գաղթի՝ զրկանքներով և կորուստներով լի ճանապարհը դեպի **Պարսկաստան**, որտեղից էլ՝ **Իրաք**: Գաղթելու միտքը մերժած շուրջ **2500** -**3000** հայեր ապաստանեցին **Լիմ** կղզում: Սակայն շուրջ 2 ամիս՝ կյանքի տարրական պայմաններից զրկված և, ամենից կարևորը, որևէ տեղից օգնություն ստանալու հույսը կորցրած, նրանք ստիպված էին հանձնվելու դարավոր ոսոխի «ողորմածությանը»: Միայն 1923 թ. ամռանը վասպուրականցիների այս մեծ խմբից ողջ մնացած և ցեղասպանությունը կրկին վերապրած խլյակները (ընդամենը **600** հոգի) քեմալական իշխանությունների կողմից հանձնվեցին արդեն Խորհրդային Հայաստանի կառավարությանը, որով և ավարտվեց Վան-Վասպուրականի հայաթափման վերջին արարը: Այնուամենայնիվ, անգամ Ցեղասպանությունից 100 տարի անց, ինչպես վասպուրականցիների սերունդները, այնպես էլ ողջ հայությունը՝ թե՛ ՀՀ-ում և թե՛ Սփյուռքում, չեն կորցրել իրենց հույսը, որ գալու է հատուցման օրը, երբ հնամենի Վան մայրաքաղաքը և Վասպուրական աշխարհը կրկին կվերամիավորվեն Հայոց պետությանը:

Որպես յուրահատուկ վերջաբան՝ կցանկանայինք ընթերցողին հաղորդել ընդհանուր բնույթի որոշ տեղեկություններ Վանի նահանգի մասին: Արևմտյան Հայաստանի այդ կարևոր վարչամիավորը զբաղեցնում էր շուրջ **33720 քառ. կմ** տարածք, որից ավելի քան **3600 քառ. կմ**-ը բաժին էր ընկնում **Վանա լճին**: Նահանգի տարածքում գտնվում էին նաև մի քանի մանր ջրային ավազաններ, որոնցից առավել խոշորը **Արճակա լիճն** էր (100 քառ. կմ): Վանի նահանգն ուներ **2 գավառ** (թրք. sancak) և **13 գավառակ** (թրք. kaza): 1914 թ. նահանգի **487000**-ի հասնող մշտական բնակչությունն ուներ հետևյալ ազգային կազմը.

ա. Հայեր - 219000 (45 %)
բ. Քրդեր - 130000 (26.7 %)
գ. Ասորիներ - 90000 (18.5 %)
դ. Թուրքեր - 38000 (7.8 %)
ե. Եզդիներ - 6600 (1.36%)
զ. Հրեաներ, կովկասյան լեռնականներ («չերքեզներ»), գնչուներ - 3400 (0.64%)

Այսպիսով, **Վանի վիլայեթը** բացառիկ տեղ էր զբաղեցնում Արևմտյան Հայաստանի նահանգների շարքում՝ քրիստոնյաների բացարձակ գերակշռությամբ՝ **309000 մարդ** (բնակչության **63.5%-ը)**: Ընդ որում, հայերի գերակշիռ մեծամասնությունը՝ շուրջ **204000 մարդ**, տեղաբաշխված էր **Վանի գավառում** և կազմում էր տեղի բնակչության **63%**-ը: Իսկ ասորիների գերակշիռ մեծամասնությունը՝ շուրջ **85000 մարդ**, տեղաբաշխված էր **Հաբբարիի գավառում** և կազմում էր տեղի բնակչության ավելի քան 52%-ը:

Summary

HISTORICAL AND DEMOGRAPHIC OVERVIEW OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE

Part two: the southern and western districts of Van's Vilayet and the town of Van

Gegham M. Badalyan

Key words – Vilayet of Van, the city of Van, Armenian semi-independent principalities, Akhtamar Catholicosate, Assyrian region, Gavash (Rshtunik), Kartchkan and Ketsan, Upper Karkar, Mox (district of Mox), Shatakh, Norduz, Aghbak, Monastery of the Holy Apostle Bartholomew, Gyavar and Dzhulamerik, Aram Manukyan.

We represent to the reader the second part of our research dedicated to the clarification of the demographic image of Western Armenia on the eve of the Armenian Genocide; the study includes rural and urban areas of south-western, southern and partly south-eastern provinces of Van's vilayet.

In the series, representing rural and urban areas of south-western, southern and partly south-eastern districts of Van's Vilayet populated by Armenians we can list the following districts and villages: in the district (sancak) Van – Gavash (Rshtunik), Kartchkan (with Ketsan), Mox, Upper Karkar, Shatakh, Norduz also from the province of Akkari – Aghbak, Gyavar and Dzhulamerik. The provinces of the first group (except Norduz) were mostly Armenian populated before the Genocide – 55-62%, and in the Upper Karkara more than 70% of the population were Armenians.

This phenomenon has 3 main reasons: 1) up to 60-ies of XIX century the above-mentioned provinces were populated almost exclusively by Armenians, 2) Some semi-independent principalities called Melicatus still preserved in Mox and Shatakh, 3) separated provinces were part of the Diocese of the Catholicosate of Aghtamar Island and the church of the Holy Cross was mobilizing center for local Armenians.

As for the second group of regions (nahiye) of Van vilayet, on the eve of the Genocide Armenians were a minority there due to the fact that the massacres and forced migration of Armenians almost did not stop there from the middle of the XIX century.

The article also includes the regional center – the city of Van. As in the first part here, too, the reader is provided by historical, demographic, and other data about the largest administrative units and major population centers. Armenian historical monuments are also well presented. At the end of the article the reader will find general geographical and statistical information on the entire district of Van.

Резюме

ИСТОРИКО- ДЕМОГРАФИЧЕСКИЙ ОБЛИК ЗАПАДНОЙ АРМЕНИИ НА КАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН

Часть вторая: южные и западные уезды Ванского вилайета и город Ван

Гегам М. Бадалян

Ключевые слова – Ванский вилайет, город Ван, армянские полунезависимые меликства, Ахтамарский католикосат, Ассирийская область, Гаваш (Рштуник), Карчкан и Кецан, Верхний Каркар, Мокс (Мокский уезд), Шатах, Нордуз, Ахбак, Монастырь святого Апостола Варфоломея, Гявар и Джуламерик, Арам Манукян.

Представляем вниманию читателя продолжение нашего исследования демографического облика Западной Армении накануне Геноцида армян, которое включает в себя сельские и городские районы юго-западной, южной и частично юго-восточной провинций Ванского вилайета.

В списке сельских и городских населенных пунктов юго-западной, южной и частично юго-восточной части Ванского вилайета представлены: в составе Ванского уезда (sancak) районы Гаваш (Рштуник), Карчкан (с Кецаном), Мокс, Верхний Каркар, Шатах, Нордуз. В составе уезда Хаккяри – районы Ахбак, Гявар и Джуламерик. В 1-ой группе (кроме Нордуза) до Геноцида армяне составляли большинство населения – 55-62%, а в Верхнем Каркаре – более чем 70%.

Это явление имеет 3 основные причины: 1) до 60-х годов XIX в. вышеперечисленные административные единицы были заселены почти исключительно армянами, 2) В Шатахе и Моксе еще сохранились некоторые полунезависимые княжества, именуемые меликство и 3) в духовном отнощении они находились в составе епархии Католикосата острова Ахтамар, которая была мобилизирующим центром для местных армян.

Что касается второй группы районов (nahiye) Ванского вилайета, то накануне Геноцида численность армян там составляла меньшинство, и это было обусловлено тем что с середины XIX века резня и насильственная миграция армян практически не прекращались и наблядался интенсивный приток курдских кочевых племен. В статью включен также центр вилайета – город Ван.

Как и в первой части, читателю предоставляются исторические, демографические и другие данные о наиболее крупных административных единицах и населенных пунктах Ванского вилайета. Представлены также армянские исторические памятники. В конце статьи читатель сможет найти общие географические и статистические сведения о населении Ванского вилайета.